

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՌԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՀՐԵԱՆԵՐԷՆ ՕՐԻՆԱԿ

Աշխարհիս երեսը ցիրուցան Հրեաները միաբանելով կազմած են «Սիոնական» անունով մարմին մը, որուն նպատակն է Հրեաները իրենց պայծառական երկիրը վերադարձնել: Տարին մէկ ֆրանք վճարող Խորայիլացին սիոնական համարուելու իրաւունքը կը վայելէ, և կը մասնակցի ընդհանուր ժողովին համար երեսփոխաններու ընտրութեան: Սիոնականութեան պատգամաւորութիւնը այս տարի օգոստոսին Զուիցերիա դաւարուեցաւ. ներկայ կին 380 պատուիրակ: Ժողովը ընդունեց Պաղեստին եւ Սիրիա հրեայ գաղութներ հաստատելու համար յանձնաժողովին ծրագիրը, որուն գործադրութեանը պիտի աջակցի 30,000,000 դրամազըխով պահեցաւ մը:

Մինչեւ վերջին տարիներս Հրեաները աշխարհական հայրենիքի մը պէտքը զգացած չէին. կրօնական հայրենիքը, սինակական, կը բաւէր իրենց ցեղային պահպանումին: Առանց հայրենի հողի, առանց ազգային լեզուի, հրէութիւնը երկու հազար տարիէ ի վեր է կ'ապրի շնորհիւ կրօնական աւանդութիւններու եւ տոհմային բնախօսական առանձնայատկութիւններու: Ընդհանուր մարդկային մտքին առաջնորդութեան մասնակցած են ու կը մասնակցին, առանց ազգային զրական յատուկ լեզուի մը. բոլոր ժողովուրդներու բարբառները հրեական ազգային կը սպասարկեն: Առաջնակարգ է իրենց զրաւած զիրքը արեւելքի հարստութեան բաշխումին ու վայելումին մէջ: Քաղաքականօրէն անկախ ամէն ազգերու առաւելութիւնները կը վայելեն առանց պարտականութիւններու մեծիակ բաժնի մը: Բայց հիմա Հրեաները սեփական հայրենիքի մը պէտքը կը զգան. բնագոյր իրենց կը թելադրէ թէ հողէ զուրկ ազգութիւն մը չի կրնար երկարակեաց ըլլալ: Մտքի յառաջդիմութիւնը հետզհետէ պիտի թուլցնէ մինչեւ որ բոլորովին քակէ այն կրօնական նախապաշարումները որոնցմով պրկուած կ'ապրի հրէութիւնը: Պրկուած պարանը փտտելու վրայ է. Հակահրեական շարժումը որ ծաղկեցաւ 19րդ դարուն վերջերը, ստիպողական հարկ մը կ'ընէ հայրենիքի մը պէտքը: Այն օրը որ Հրեան բաղադրական ազգութիւն մը կազմէ ունենալով իր հայրենիքը, աշխարհէ մէջ իր կացութիւնը կը փոխուի: Ամէն տեղ փոխանակ այլացեղ ու այլակրօն հայրենակից

մը նկատուելու պիտի համարուի հիւր մը միայն: Պաղեստինացին զանազան երկիրներ պիտի ըլլայ այն ինչ որ օրինակի համար Ֆրանսացին Անգլիոյ մէջ, Գերմանացին Իտալիոյ մէջ. իր տէրութեան հովանիին տակն է: Կեղծանանալով իր հայրենի երկիրը Հրեան աւելի քան երբեք հզորացէ պիտի տիրապետէ Եւրոպայի որ արդէն իր ցանցերուն մէջն է:

Սիոնական շարժումը շատ տհաճելի նորութիւն մըն է թիւրքիոյ համար. խաղաղասիրական երեւոյթին տակ արդէն կը նշտարուի ապագայ հրեական անկախութեան հեռապատկերը: Ինչ ընել սակայն: Թիւրքերը չեն կրնար այնքան անխուհեմ ըլլալ որ ջարդեն Պաղեստին գանուող Հրեաները. ու նոր եկուորներուն դէմ անյաղթելի դուռաբացութիւններ յարուցանելու համար շատ ալ պիտի մտածեն: Հրէութիւնը բանակ չունի բայց զրամ ունի. հրեական մեծ ազդանքներ կը փայլին Եւրոպայի մէջ. իր ուժը ահազին է. ամէն պետութիւն քիչ թէ շատ հրեական լուծին տակն է:



Երբ հայ ժողովուրդը ազատասիրական շարժումներովը զործնականապէս պահանջել սկսաւ ապրելու իր սուրունքը, թիւրքերն ու թիւրքամոլները արհամարհական հեղուկութեամբ մը ուր սակայն աստիճանական թեթեւ շեշտը կը զգացուէր, կ'ըսէին. «Էհ, էհ, ա՛լ հիմա կարող Հրեաներուն պիտի գայ անկախութիւն ուղեւոր»: Կ. Պոլսոյ մէջ վախիտ, շահուն միայն անձնատուր, խտրական զուրկ հասարակութեան մը հետ մեզի միեւնոյն աստիճանին վրայ ցնելով թիւրքերը կը ջանային մեր դատը ծիծաղելի ընել եւ միանգամայն հասկցնել թէ անիրականալիին ետէն կ'իյնանք: Եւ սակայն Հրեան ալ կ'արդէն ազգային ապագան հիմնել, թիւրքերէն ա՛ն ալ իր հողային բախնը կը պահանջէ:

Սիոնականութեան ընդհանուր ժողովին նկարագրութիւնը կարողալով կը զգանք թէ երբ Հրեաներուն հետ բաղադատուինք ինքզինքնիս ոչ թէ նախատուած այլ եւ շատ ալ բարեբաստիկ պէտք է համարէինք եթէ միայն հայ ազգը այնքան բաղադատը եղած ըլլար որ գոնէ մասամբ ունենար Հրեաներուն վայելած զօրութիւնը: Հրեական ազատագրութեան գրօշակալի կը հանդիսանան երկու ուժ որ մեզի կը պակսին. — աազանդ ու զրամ: Հեռուէն ի-

րենց համաձայնքի արտայայտութիւններովը, կամ մօ-  
տին իրենց անձնական ներկայութեամբը սխնական մօ-  
ղովին մասնակցեցան այնպիսի անձնաւորութիւններ որոնք  
խորհուրդի իրենց մեծ ստղանդովը ո՛չ թէ ցեղի մը այլ  
մարդկութեան պատին են, Չէզարէ Լսմարոզօ մը, Մաքս  
Նորասու մը: Մեծ զրամատւորները, պարագլուս ունենա-  
լով Ռոչիլաները, սակին կը շոտյլեն հրէական հայրենիքի  
վերածնութեան գաղափարին:

Հայ տաղանդը ինքն էր ստանձնած հայ ազգին ազա-  
տագրութեան դատը: Բանաստեղծ, հրապարակագիր, վի-  
պասան, քարոզիչ երգեցիկ, գրեցիկ, խօսեցան, յայտա-  
բարեցիկ մինչեւ որ ազգին ահազին զանգուածը շարժիլ  
սկսաւ. ու երբ ա՛լ դորձելու ժամը հասաւ, դրեթէ ամենքը  
շարունակեցին խօսիլ միայն, քարոզել միայն. հնչած էր  
կուռի շեփօրը, քիչերը միայն երեւցան ճամբարը իրենց  
զինուորի պարտականութիւնը կատարելու: Տխուր երե-  
ւայթ է սր զարգացեալ, մտաւոր կարողութիւններով օժ-  
տուած Հայերուն ամենասուտար մեծամասնութիւնը ան-  
տարբեր չէզոքութիւն մը միայն պահեց ու կը պահէ այն  
ահեղ մենամարտին մէջ որ ինքնապահպանութեանը հա-  
ղար հայութիւնը կը մղէ: Երբ յոյ՛ր կը շողայ, աս զար-  
դացածները ամենքն ալ են պզտիկէն էն մեծը կը վառին,  
կը բորբոքին. հայութեան հպարտութիւնը կ'ունենան. ու  
ձախորդութեան առաջին նշանին ամենքն ալ միաշարժն  
բերնով քննադատ կը կտրին: Չեն կասկածիք թէ իրենք  
կը նմանին այն զինուորներուն որ ճակատամարտի պահուն  
երբ պարտութեան վախը կը սկսի, կը ձգեն կը փախչին:  
Այդ զարգացեալ կոչուածները ամենամեծ մասամբ կեան-  
քի գաստիարակութիւն չեն ստացած: Հայրենասիրութիւ-  
նը իրենց համար միայն վաղանցուկ հաճոյք մըն է, և ոչ  
թէ սրտի անդիմադրելի դօրեղ զգացում, մաքի խորին մը-  
տածութիւններու ծնունդ. մեր ազգային ողորմելի դաստիա-  
րակութեանը արտայայտութիւններն են. ապիկար՝ ո՛ր և է  
նախաձեռնութեան համար, վախցող՝ թշնամանքէ, փա-  
խտտական՝ վտանգին առջեւ: Բազմաթիւ ասոնց մեր  
անզարգացած դասակարգը, ինչ որ « ժողովրդային խաւեր »  
կը կոչուի, աւելի ստիպուած, աւելի նկարագրի տէր, աւելի  
յարատեւող երեւան կուգայ:

Եւ ոչ իսկ կ'արժէ բոլոր մը նեղութիւն յանձն առնել  
հայ զրամատէրը հրէին հետ բազմապիսի համար: Անց-  
եալէն յիշատակութիւն մը ընթերցողին միտքը ձգենք:

Խորին Նար-Պէյ եպիսկոպոսը թիւրքեւոտս պատե-  
րազմին ատենը երբ Բեղրպուրի գնաց հայկական գատը  
պաշտպանելու պաշտօնով, հարկադրուեցաւ իշխանիլ  
պանդուկի մը հին գեւոր գ յարկը ուր ընդունեց կորչա-  
քօֆ իշխանին փոխադարձ այցելութիւնը: Ծերունի շան-  
սըրիէն կեանքին մէջ թերեւս այլքան մեծ յոգնութիւն  
երբեք յանձն չէր առած: Մեծափարթամ Հայերը կարող  
չէին եղած գոնէ երկրորդ յարկի սենեակ մը նստեցնել  
Հայաստանի փրկութեան պատուիրակը:

Պիւրին գացող պատուիրակութիւնը զրամական սա-  
ռապանքներով շարժարուեցաւ. հազիւ թէ կարելի եղած էր

քանի մը հարիւր սակի ճարել, ան ալ Ներսէս պատրի-  
արքին բոլոր ազգեցութեամբը. եւ սակայն ամբողջ հայ  
ժողովուրդը, հարուստները էն առաջ անցած, «անկա-  
խութիւն, անկախութիւն» կը գոռային: Մեր հարուստ-  
ները կը կարծեն ինքզինքնին արդարացիւ ըսելով՝ « Ի՞նչ  
ընենք, յեղափոխականներուն ուղղութեանը չենք հաւ-  
նիր: » Կրնան իրաւունք ունենալ պայմանաւ սր իրենք ալ  
գործնականապէս ուղղութեան մը հետեւին: Ո՛ր է իրենց  
ծրագիրը, ո՛ր են իրենց խորհուրդները և անոնց դը-  
ժագրութեան սկզբնաւորութիւն մը:

Հայ դատին պաշտպանութեանը համար իրենց մտա-  
ւոր կարողութիւններէն ծառայութիւն մը նուիրող, իրենց  
զրամէն ամենաչնչին բաժին մը հանող այնքան հայեր ե-  
թէ գտնուէին որքան գտնուեցան ժողովրդին մէջէն իրենց  
անձը զոհողներ, իրենց արիւնը թափողներ, հաւատանք  
որ հայ ազգը այսօր շա՛տ տարբեր վիճակ մը ունեցած  
կ'ըլլար:

Գիտ շատ ուշ չէ: Չարգացեալները, սնեւորները զո-  
նէ Հրեաներէն օրինակ առնեն:

ԱՐՓԻՍԻ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՄԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՊէՊ)

Ա. Մ Ա Ս

Բ

Կիրակի օր մը, ցորեկուան մօտերը: Միւսնայն տեղը  
ու միւսնայն պատակերը գրեթէ, սա տարբերութեամբ սր  
գաղթականներուն մեծ մասը կիրակնաւորուած են: Բա-  
րեպաշտ գաղթականներու ելումուտը մը եկիղեցիին զըռ-  
նէն: Ռուսական շոգենաւով ճամբորդներ հասած են, ու-  
րոնք հետզհետէ եկեղեցի կը հասնին: Մեծ գէպը մըն է  
գաղթականներու կեանքին մէջ գաղթողներու ժամանումը.  
Իւրաքանչիւր թղթաբերին՝ երիտասարդներու սասուար  
խումբ մը մինչեւ նաւահանգիստ կ'երթայ, շողենաւ, ընդ  
առաջ նորեկներուն:

—Քանի հոգի եկեր է... ո՛վ կայ մէջը... Իսկիւ-  
տարէն մարդ կա՛յ... — Որքան շատ ըլլան եկուորները,  
այնքան ուրախ կ'ըլլան կարծես գաղթականները: Ո՛րքան  
հաճոյակատար են անոնց նկատմամբ... ծանօթ կամ ան-  
ծանօթ, կը դիմաւորեն զանոնք, տեղեկութիւններ կու-  
տան, կ'օգնեն, կ'առաջնորդեն, փութկոտ ու բարեացա-  
կամ:

Եզրիպտական ահռելի արեւ մը շիպչիտակ կը զարնէ  
բախիւն վրայ, ամբոխին վրայ, որ այս հրատապ լոյսին մէջ  
վայրկենական կայքերէ, աճապարող անցքերէ ետք՝ կ'ա-  
պաստանի ստուերոտ անկիւններ:

Առաջնորդարանին զրան արջուկեցողները բազմաթի-  
 են այսօր. կան որ ներսը, սանդուղին երկայնքը, մին-  
 չեւ ժողովասենեկին զրան առաջը կը սպասեն, անշարժ:  
 Նպաստամատոյց ֆանձնաժողովը ժողով զուարթ չէ. ի-  
 րենց կարգին կը սպասեն:

Բարսպան մը բարձրաձայն նամակներու հասցէներ  
 կը կարգայ խուն բազմութեան մը: Աշխոյժ ձեռքեր կ'եր-  
 կընան, ուրախութեան բացագանչութիւններով. յուսա-  
 խար գէլքեր կը հեռանան, երբ ա՛յ նամակ չի մնար:

Յանկարծ՝ կառք մը, արաբական շքեղ նժոյգէ մը  
 քաշուած՝ փոշիի ամպի մը մէջ ներս խուփեց ու եկաւ կե-  
 ցաւ Առաջնորդարանին զրան առջեւ, ուր շարուած գաղ-  
 թականները այնքան յարգանքով որքան ստիպուած՝ ետ  
 քաշուեցան. կառապանին գահակէն մէկը թեթևօրէն  
 վար ցատքեց, ցած հասակով, կարճ վիզով, հաստ գիմա-  
 զձութեամբ, ու ներս մտաւ ձեռքի արագ բարեւ մը լայր-  
 տելով բարսպաններուն որոնք կը շտիպէին ու բարեւի կը  
 կենան: Յարգական նահանջ մը, փութկոտ տեղատուու-  
 թիւն մը ունեցան նաեւ սանդուղին երկայնքը կամ ստո-  
 րոտը սպասող գաղթականները որոնց մէջէն ինք կ'աճա-  
 պարէր քաշուածքի ու ձեւերու անպաշտօնականութեամբ  
 մը որ կը թուէր հակասել իր անցքը բարեւող խորունկ  
 յարգանքի ցոյցերուն հետ:

— Աս ո՞վ է, հարցուց նորեկ մը, տաճկերէն. որով-  
 հետեւ գաղթականներուն՝ զիւրին եղած չէր տաճկական  
 գոտակին պէս մէկ կողմ՝ նետել տաճկերէն խօսելու սովու-  
 րութիւնը:

— Բանն է... Բէքմէկիան կ'ըսեն... Թաղականներուն  
 մեծն է... բոլոր գործերուն աս կը խառնուի...

— Իրա՞ւ... ես կառապանը զիտցայ առաջ, կ'աւելցնէ  
 միւսը քրքիջով մը...

Հաղիւ ընդհանուր ուշադրութիւնը անջատուած էր այս  
 ղեկընէն, երբ եկեղեցիին բակին դռնէն եկող բարձրաձայն  
 խօսակցութեան մը ազմուէր գլուխները այն կողմը դար-  
 ձուց:

40—43 տարեկան երեւոյող, կայտառ ու յաղթանդամ  
 տակայն, երկայնահասակ, գլխազիր Տ ի պէս մեծ֊փոք,  
 յաւակնոտ, կունտ ու կլոր մարմինով մարդ մը, — մոխ-  
 րոտած մազեր, քաղքենի փոքի պէս լայն ու ուռած ճա-  
 կատ, աղիւտի կարմրութեամբ դէմք, — պիտերու պէս  
 հաստ յօնքեր որոնց խիտ մացառուտին մէջէն խոշոր ու  
 հրամայական աչքեր կը վառէին, ուռած ակնագունտերով,  
 հայկական վեհաշուք քիթ մը, հաստ, արաբ շրթունքներ,  
 զոր առատ պիտեր չուանի պէս ոլորուած կը ծածկէին ամ-  
 բողջովին, եռայարկ ծնօտ մը գոռոգ՝ յաղթականօրէն  
 հանդող լանջաշապիկին վրայ, խոշոր փոք մը առջեւը  
 ձգած ինչպէս թմբակահար մը իր թմբուկը, բարձրահասակ  
 ֆէյը տիրաբար ետեւ նետուած, մէկ ձեռքը հովանոց ու  
 միւս ձեռքը լայն տաբատին զրպանը՝ — այդ վայրկենին  
 եկեղեցիին դռնէն ներս կը մտնէր, երկու չափահաս, նի-  
 հար, լրջերեւոյթ մարդերու մէջտեղէն, նմանապէս ֆէյսով,  
 — վաճառականներ ապահովաբար, որոնք կը թուէին մի-

այն մտիկ ընել գէր մարդը, որ կը յառաջանար խոշոր ու  
 հեղինակաւոր քայլերով, բարձրաձայն կը խօսէր, ձեռքի  
 հովանոցը երերցնելով սպառնազին, գլխի բուռն շարժում-  
 ներով որոնց համեմատ ֆէյսին ծուր կ'երերար խանդա-  
 րած ժամացոյցի մը ճօճանակին սլա:

« Ո՞վ է » ի երկար փսփսուք մը անցաւ գաղթական-  
 ներուն մէջէն: Մէկը՝ սնապարձ՝ յայտարարեց.

— Ես կը ճանչնամ, — ասոր Մարտիկ աղա Սրմա-  
 քէշեան կ'ըսեն... Պոլիս ճերմակեղէնի մեծ վաճառական  
 էր... շատ հարուստ...

Երեք հոգիները կը մօտենային: Մարտիկ աղա կոչ-  
 ուածին ձայնը հիմակ կը հնչէր զօրեղ ու տիրական.

— Ի՞նչ պիտի ըլլայ էֆէնտի՛մ... խաբեայութիւն,  
 խարդախութիւն, սճրագործութիւն, սրիկայութիւն...  
 Դեռ ի՞նչ պիտի ընէին... Ազգը աս վիճակին հասցուցին...  
 մէկիկ մէկիկ բռնել կախելու է այդ խայտառակները, կա-  
 մուրջին գլուխը... Իրենցմէ ո՞վ ազատութիւն, ո՞վ թա-  
 գաւորութիւն կ'ուզէր կոր...

Քովիները բաներ մը կը մրմոյային, անլսելի, մինչ  
 ան կը շարունակէր անուշադիր անոնց ըսածին, միեւնոյն  
 շեշտով ու ոճով... միեւնոյն ծայրայեղ շարժումներով,  
 գլուխը խորխորէն աղիւտ անդին, չորս կողմ՝ պտտցնե-  
 լով. մերթ կանգ կ'առնէր, իր ընկերներէն ետ կը մնար,  
 շարունակելով խօսել, ու նորէն կը քալէր.

— Ասոնք մասնողը մեծ բարիք մը ըրած կ'ըլլայ,  
 մեծ բարիք մը ազգի՛ն, մարդկութեան...

Այս խօսքին՝ ընկերներէն մէկը ահաբեկ արտայայ-  
 տութիւն մը ունեցաւ գէմքի. շուրջը գիտեց կասկածան-  
 քով, աճապարանքով բան մը լպտեց Մարտիկ աղային,  
 որուն ափիկա ափթ եղաւ հսկայական զօրեղ քրքիջի մը  
 որ գործիքէ մը ելլել կը թուէր աւելի քան մարդկային կո-  
 կորդէ մը:

Քրքիջը հեզնական ժպիտի մը փոխուեցաւ:

— Ի՞նչ վախկոտ ես պէ՛, Մարկոս աղա, ի՞նչ կրնան  
 ընել:

Կամաց կամաց կը մօտենային: Եկեղեցիին առջեւ  
 կանգ առաւ, հովանոցը գետին դրաւ, վրան կոթնեցաւ ու  
 ձեռքը տաբատին զրպանէն զուրս հանելով համայնապար-  
 փակ շարժումով մը գաղթականներուն զանազան խուճրե-  
 րը ցուցուց, որոնք զինքը կը գիտէին ապշած ուշադրու-  
 թեամբ մը:

— Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, ըսաւ բորբոքուած ձայնով  
 մը, սա խեղճութիւնը, սա թշուառութիւնը... Աս խեղճե-  
 ըուն յանցանքը ի՞նչ էր որ աս վիճակին մէջ ինկան...  
 Ասիկա որին գործն է... Ո՞վ է ասոնց պատճառը...  
 Անոնք չե՛ն, յեղափոխականները... Խեղճ ազգը այս ահ-  
 ոսկի վիճակին հասուցին, ինչքը, հարստութիւնը խեղին,  
 սունը տեղը քանդեցին, ու զայն օտարութեան, պանդխ-  
 տութեան մէջ ձգեցին:

Լռեց: Ոչ ոք կը խօսէր, ընդհանուր զարմացումին  
 մէջ. իրեն կը մօտենային տակաւ:

Մարդը իր բօլը նայելով՝ գաւառացի հայ մը տեսաւ

որ ներկատուի մը առջեւ կ'ծկուած՝ իրեն կը նայէր զարմացումով:

— Գուն ս'ը տեղացի ես, հարցուց հրամայական շեշտով մը:

Ներկարարը, հարցումին անակնկալէն շուարած ու շեշտին տիրապետութենէն սարուած՝ ոտքի ելաւ յարգանքով:

- Էրզրումցի, թոթովեց:
- Ո՞ր կէ կուգաս:
- Պալիսէն:
- Ի՞նչ կ'ընէիր հոն:
- Բեռնակիր էի:
- Ընտանիք ունի՞ս:
- Հապա՛, ունի, բայց այս գէպքերուն, Աստուած ձեզի օրեր...

— Տեսա՞ք, հնչեց նորէն Մարտիկ աղային թնդացող ձայնը... ասոր ալ ընտանիքը շարդուեր է... Եւ գեռ բանիներունը...

Ու ա՛լ չգրազելով ներկարարով որ ձեռքերը բարեւրանած նոր հարցումներու կը սպասէր, Մարտիկ աղան հեռացաւ:

— Հա՛, աղէկ միտքս ինչաւ... հոս Նպաստամատոյց Յանձնաժողով մը կայ եղեր...

— Այո՛, ԼՖՆտի, այո՛, պատասխանեցին բազմաթիւ ձայնիւր ամբոխին մէջէն ստորուկ փութկոտութիւնով մը... այսօր ալ նիստ կ'ընեն կօր:

Գաղթականներէ առաջնորդուած՝ մարդը Առաջնորդարան մտաւ, մինչ ժողովուրդը դուրսը իրմով կը զբաղէր, ապշութեան առաջին վայրկեանը անցնելէն ետք՝ տէր ըլլալով զինքը ուզածին պէս գատելու:

Կանանչ ընդարձակ սենեակի մը մէջ, երկայն ու թղթերով ծածկուած սեղանի մը շուրջ, բոլորուած են՝ ցանցառ՝ Նպաստամատոյց Յանձնաժողովին անդամները: Գաղթականներու վերաբերեալ գործերով կը զբաղին, բընակութիւն, ուտեստ, գործ եւայլն: Ութ հոգիէ կը բաղկանայ Յանձնաժողովը, որոնց երկուքը բացակայ: Մէկը, կանանչ թիկնաթոռին մէջ ընկղմած յուրօրէն, «Փառ ա՛՛ Ալեքսանտրի» թիւի մը ետեւ անհետացած՝ որուն եղբրքէն վեր կ'երեւայ խոշոր, ճաղատ գլուխ մը միայն, խեղդուելու վրայ եղող մարդկային մարմնի մը ջրէն դուրս մնացած վերջին մասին պէս, կը կարգայ, ատեն ատեն՝ ծխելու ստիպուած վայրկեաններուն՝ անտարբեր նայուածք մը ձգելով խնդրարկուններուն վրայ: Ուրիշ երկու հոգի անոնց կը նուիրեն պարապուրդի վարկեանները զոր իրենց կը ձգէ քաղաքական կամ առեւտրական տաք վիճաբանութիւն մը ուր բռնուած են: Մնացածները փոխն ի փոխ, յաճախ երեքը մէկանց, կը զբաղին գաղթականներով:

Մէկիկ մէկիկ, իրարու ետեւէ, ճիտերնին ծուռ, կարծես ամօթաճար, կուզան ու կը մեկնին խեղճերը: Սիրտ կտրաող պատմութիւններ, լալկան շեշտերով, կ'իյնան այդ բերաններէն որոնք առաջին անգամ ըլլալով կ'աղա-

չեն, գթութիւն կը հայցեն: Արհաւիրքի, տառապանքի անհատական էջեր են զոր կուզան կարգաւ կարգաւ այն արինատառ, հրէշային ողբերգութենէն զոր ամբողջ Հայ Ազգը ապրեցաւ: Բանտորներու, արհեստաւորներու, վաճառականի զրապիւրներու, շուկայի աշկերտներու, Պոլսոյ մէջ գէշ աղէկ ապրիլ կրցող բայց Աղեքսանդրիոյ մէջ ամէն միջոցէ զուրկ ընտանիքներու խեղճուկրակ սողանցութիւն մըն է, յուզարկաւոր թափօր մը կարծես, որ կ'անցնի՝ շարականելով միեւնոյն աղիողորմ յառաջարանը կողոպուտի, ջարդի, ամբողջական թշուառացումի, միեւնոյն աղաչական, արտասուելից յանկերզը, «Գործ տուէք, զրամ տուէք, ուտելիք տուէք...»

Բարի կամեցողութիւնը միայն չէր բաւեր սիտիկելու այլքան թշուառութիւններ, վերականգնելու այլքան ընտանիքներ: Աղեքսանդրիայի բնիկ թաղականները, իրենց «տալէ ֆարնիչի»ին մէջ անսխորթօրէն ընդմիջուած, մինչեւ այն ատեն իրենց անձանթ հասարակային մտահոգութիւններու մէջ յանկարծ մխրճուած բռնի, ամէն շարթ ստիպուած բազմաթիւ, երկարատե նիստեր գուժարելու, սիրտ հատցնելու, խօք հասկցնելու մարտերու զոր չբարտրութիւնը պինդ-գլուխ կ'ընէր, առաջին անգամ ըլլալով դէմ գէմի եկած հայ ժողովրդին ամէն տարբերուն ու միեւնոյն ատեն անոր ահռելի թշուառութեանը՝ որուն կոչուած էին զարման տանիլ իրենց ձեռքին տակ զանրուած չնչին միջոցներով, թաղականները, կ'ըսենք, կը ստիպուէին յաճախ — եթէ ոչ մերժել — անուշութեամբ, խոստումներով, յետաձգումներով ճամբել գաղթականները, որոնց տեսակ մը խաբուտիկ գոհացում, յոյսի պէս բան մը կը տրուէր՝ իրենց անունին, մականունին, նախկին ընկերական պիւրքին խնամատ արձանագրութեամբ յատուկ տեսրակի մը մէջ:

— Շատ աղէկ... անուննիդ գրուեցաւ... կը փնտրուենք... սպասեցէք... ինչալլահ...

Խեղճերը կը յամառին, միշտ պաղատագին, միշտ խոնարհ, կը կրկնեն ցաւագին զրուադները, կ'ըսեն նորէն անկարելիութիւնը զիմանալու, անմիջական օգնութեան մը հրամայող պէտքը, ստէպ իրենց ներկայ թշուառ վիճակին հակադրելով միամտօրէն՝ սնափառ նկարագրութիւնը իրենց բարգաւաճ անցեային, «Մի՛ նայիք օր ասանկ ենք... մենք ալ վախթով...» մինչեւ ստիպելու աստիճան որ լրագիր կարգացողը կամ վիճաբանողները զաղբեցնեն իրենց մեկուսացումը, ստէպ հատցնելու աստիճան բարի աղաներուն համբերութիւնը, զանոնք «Ինչ ընենք, չենք կրնար»ին եսամոլ ինքնարգարացումին, ձեռնալուացումին հասցնելու աստիճան:

Երբեք սակայն համարձակ կամ պարզապէս լիրտ տիպարներ որոնք կ'ընդվզին քաղաքավար մերժումներու ոսկեզօծ կեղծաւորութեանը դէմ, խնդրելու տեղ կը պահանջեն, աղաչելու տեղ կը սպասունան իսկ:

— Ի՞նչ ըսել է, ձեր պարտքն է մեզի նայիլ, գործ գտնալ, ստակ տալ... մենք ալ Հայ ենք: Մովորաբար յեղափոխականներ են ասոնք, երկար

ատեն բանտարկուածներ, մահուան վտանգներու մէջէ անցած մարդեր, որոնք կը համարձակին բիրտ ու պահանջող լեզուն գործածել իրաւունքին, ինչպէս սա Ատա նացի Յակոբը, քաջ, յանդուգն, անկեղծ ու յաղթան գամ մէկը, յեղափոխական, բանտ ու շարչարանք տեսած, մահուան քուած մարդ մը, որ թաղականներու կէս-մերժողական պատասխանէն արդէն կատարած՝ անսոյմէ մէկը — որ յանդգնած էր յանդիմանել զինքը իր խիզախ վարժունքին համար — պարտէզը ամէնուն առջեւ նախատելէն, խայտառակելէն ետքը, համարձակե՛ր էր նոյն իսկ ժողովասենեակ մտնել ու հոն կրկնել տեսարանը, զայրոյթի, ցասկոտ արհամարհանքի ջախջախող, բռունցքի հարուածներու պէս բիրտ խօսքեր նետել՝ զայնակազած ու վախկոտ շուարումի մը մէջ զողահար լռող թաղականներուն երեսին, ի մեծ ուրախութիւն թերեւս զաղթականներու որոնց սրտէն կը խօսէր: Խրոխտ ու պերճախօս ամբաստանադիր մը թաղականներուն դէմ ի նպաստ զաղթականներուն, տաճկերէն լեզուով (արհամարհական կերպով յայտարարած ըլլալով այդ թաղականին՝ « Էրմէնիճէ պիլմէմ, թիւրքճէ սէյլէ, թիւրքճէ »), և ուժով, պատկերալից ու խիստիպ բառերով կենդանաւորուած, զօրեղ ու ցնցող ձայնով մը արտասանուած... « Ի՞նչ էր ըրածին, իրե՛ն պէս մէկուն որ Ազգին փրկութեանը համար այնքան վտանգներու ենթարկած էր ինքզինքը, մահը աչքը առաջ, բանտարկուած, շարչարուած, ու քիչ մնաց՝ կախաղանի դատապարտուած... չոր հաց կուտային իրեն, չոր հաց... » Ու այս կ՛ծու հեղնութեան ձաղկումէն ետքը՝ ձեռքի զայրացկոտ ու վէս շարժումով մը պապանձած թաղականներուն երեսին նետելով սա խօսքերուն այրող ապտակը.

— Սուլթան Համիտը ձեռնէ աղէկ է... ձեռնէ աղէկ է... Ես անոր պետութեանը դէմ գաւեցի, անոր ոստիկանները սպաննեցի... անիկա իս սնուցանելէն ետքը՝ երեքուկէս զրուշ ալ ստակ կուտար ինձի ամէն օր, երեքուկէս զրուշ... Դո՛ւք ի՛նչ ըրիք:

Իր ըսելիքը աւարտելէ վերջ՝ հանդարտ, զուլբը բարձր, զուրս ելքը էր, մինչպէս այդ ուժին առջեւ խանդաղատալից հիացումով կը քաշուէին, ճամբայ կուտային զրան առջեւ խմբուած, սանդուղին երկայնքը շարուած գաղթականները, ու թաղականները՝ իր մեկնումէն սրբտօտած՝ քաջութեամբ կը խորհրդակցէին այդ վտանգաւոր անձը Ազգաբանորիպէն հեռացնելու միջոցներուն վրայ:

— Ներսէս որիչ մարդ կայ ճանրմ, չըլլար, սպանեցէ՛ք:

— Թո՛ղ տուր կ'ըսեմ կոր, աղբա՛ր, ես քու ճանչցածներէդ չեմ, ինձի Մարտիկ Սրմաքէշեան կ'ըսեն, ես թաղականութիւն ըրած եմ Պոլիս... ես ստակ ուղելու չեմ երթար կոր, այլ ստակ տալու, կը հասկնամս:

Դուրը բացուեցաւ ուժգնօրէն եւ քիչ մը առաջ մեր տեսած Մարտիկ աղան ներս նետուեցաւ:

— Ճանրմ, թաղական էֆէնտիներ, առ ի՛նչ խայ-

տառակութիւն է, ինչո՛ւ թող չեն իտար կար ինձի պէս մարդերուն ներս մտնել: Ըսէ՛ք ձեր զոնապաններուն որ քիչ մը մարդը ճանչնալ սորվին:

Գաւառացի մը, որ պահ մը առաջ կը խնդրէր, լոնց ու մէկ կողմ քաշուեցաւ զարմացումով: Կարդացողը ապշուած թեամբ լրագիրը վար ձգեց: Վիճաբանողները, մէկէն, լրոնցին: Սենեակին մէկ անկիւնը, զրասեղանի մը ետին կորսուած զրագիրը անդիէն իր բարակ զեղին մօրթըք երկնցուց հարցաքննող:

Մարտիկ աղա, իր շուրջը քթթող հետաքրքիր զարմացումին բոլորովին անտարբեր, հսկայ մարմնի անկումով մը փռուեցաւ թիկնաթոփն վրայ, թաշկինակը հանեց զրպանէն, խոշոր թաշկինակ մը, որով իր քրտնած զէմքը ամբողջովին ծածկեց, սրբեց, ու, յենարանին կոթնելով, չորս կողմը սկսաւ նայիլ:

Բարեմիտ, վարդազոյն զէմքով երիտասարդ թաղական մը, ակնոցով, գաղթականներուն համար էն սրտանց աշխատողներէն մէկը,

— Բա՛ն մը կ'ուզէիք արցեօք, հարցուց:

— Ես բա՛ն մը ուզեմ, պոռթկաց Մարտիկ աղային ուժին ձայնը: Բա՛ւ լիցի: Փառք Աստուծոյ, զեռ այդ վիճակին հասած չենք: Իմացայ որ հոս գաղթականներուն օգնելու համար նպաստամատոյց յանձնաժողով մը կայ եղեր, որ նուիրատուութիւններ ալ կ'ընդունի անշուշտ: Եկայ որ իմովանն ծառայութիւն մը մատուցանեմ մեր խեղճ ազգին:

Մարդը օտքի ելաւ. — բաճկոնակին զրպանը երկարօրէն խոսնելէն ետքը կոյտ մը զրամ հանեց ու սեղանին վրայ դրաւ:

— Ահա՛ ձեզի 10 անգլիական ոսկի: Է՛հ, ի՛նչ ընենք, մեզի պէնները տալու են, տալու՛ որ կարելի եղածին չափ զարմանենք սա անամօթ յեղափոխականներուն մեր խեղճ ազգին հասուցած ահագին վնասները:

Ասոր վրայ Մարտիկ աղա նետուեցաւ կատաղի յարձակումի մը մէջ ընդդէմ յեղափոխականներուն, սրուն թաղականները կ'ունկնդրէին ապշած ուշադրութեամբ մը զոր տասը ոսկիները քիչ մը հաճոյակատար կ'ընէին:

— Միւսի Չուպուքճեան, Էֆէնտիին ընկալադիր մը տուէ՛ք, ընդմիջեց թաղական մը կէս—հեղնոտ:

— Ներեցէք, Էֆէնտի, անուննիդ ի՛նչ է, հարցուց հեռուն զրագրին բարակ ձայնը:

Իր հակայեղափոխական ճառին մէջ ընդմիջուած, Մարտիկ աղա պէմքի դժգոհ ծամածոտմ մը ունեցաւ որ կրնար նշանակել նաեւ՝ « Ի՛նչ, ո՛վ ըլլալս չէ՞ք գիտեր ».

— ՄԱՐՏԻԿ ՍՐՄԱՔԷՇԵԱՆ, Պոլիս վաճառական:

(Շարունակելի) ՊԱՐՈՅՐ

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ Կ. ՊՈԼԻՍ

Բ

Գերսան պատերազմականը ներկայութիւնը Կ. Պոլիս 1884էն արդէն ընդարձակած էր գերման վաճառականութիւնը. զէնքերու խոշոր ապսպարանքներ գերման ճարտարագործութեան՝ շահու ամուր հաւաններ եղան որոնց վերին հսկողութիւնը ստանձնեց գերման պիւանդիտութիւնը։ Պ. Ֆոն Հացֆէլտի ջատագոված գաղափարը գործադրութեան ճամբուն մէջ կը մտնէր։ Կ. Պոլսոյ նախկին դեսպանը՝ Գերմանիոյ արտաքին գործերու նախարարութեան խորհրդական եղաւ։ Իր յաջորդը, Պ. Ֆոն Բատովից, իր ցոյց առած ճամբէն քաշեց։ Պ. Ֆոն Բատովից՝ շահու բուն քաղաքականութիւնը սկսաւ։ Ինչ որ ան ատեն եւրոպական միաբանութիւն կը կոչուէր, այսինքն Պերլինի գաշնադիրը ստորագրող պետութեանց առերեւոյթ համաձայնութիւնը, Գերմանիոյ ճարտարագործական ու առեւտրական մաքառումին ընչաքաղցութեանը ասջեւ տեղի կուտար։ Գերմանիոյ դեսպանը գործի խնդիրները ամէն բանի կը գերադասէր։ Քրուի ու Մաւզեր սլաշտօնական գործարանատէրներ եղան, եւ իրենց ծանր ապրանքին տեղաւորումը՝ պետական խնդիր մը։ Դիւանագիտութիւնը հովանաւորեց Տէօյ Պանքը որ 1888ին գործի սկսաւ օսմանեան երկաթուղիներով։ Փոքր առեւտուրը սկսաւ ամէն կողմ սպրդիլ եւ կողոպուտին մասնակցել։

Պ. Ֆոն Բատովիցի էն մեծ գործը եղաւ Թիւրքիոյ հետ առեւտրական գաշնադրի մը կնքումը, որով մինչեւ ան ատեն եւրոպական պետութեանց՝ Գաբիդիւլաօսմանն քու օրէնքով՝ վոյելած ծովային առանձնաշնորհումներէն մէկ քանին կը զոհէր սուլթանին։ Ապտիւ Համիտ խոր ուրախութիւն զգաց այս բանէն։ Ոչ մէկ սուլթան իրեն չափ զգածուած է իր գերիշխանութեան առջեւ զրուած կապանքներէն։ Պ. Ֆոն Բատովից այսպէս սուլթանին երախտագիտութիւնը շահեցաւ։ Ապտիւ Համիտ մեծարանքներով ու նուէրներով ողողեց զանի։ Դեսպանը աւելի առաջ գնաց. իր ծրագիրն էր Թիւրքիան գաշնադրով մը Երրեակ Ֆիզակակցութեան միացնել, ու այս բարեկալի կարգադրութեան հրապոյրումն է որ Պ. Ֆոն Բատովից համոզեց կայսրը Թիւրքիա այցելելու 1889ին։

Սուլթանին համար, սակեղարի շրջանը վերջացաւ Հայաստանի շարգերովը։ Այդ սակեղարը տեւած էր 1880էն 1895, եւ, վերջին հինգ տարիները, Վիլհելմ Բի բարեկամութիւնը մասնաւորապէս պնծած էր զանի։ Պ. Ֆոն Հացֆէլտէն ի վեր, Գերմանիոյ բոլոր դեսպանները օսմանեան վեհապետը շրջապատած էին հոգածութիւններով ու փայփայանքներով։ Միւս պետութեանց դեսպանները, ոմանք զահուն մօտենալու համար, սրիշներ իրենց զիրքը սլաշտօնաւորու համար, բիշ բիշ այդ սովորութիւնը ընդունեցին։ Ռուսիա իսկ կակուղցուց իր

դաժան ձայնը։ Ժպիտներու, ընծաներու եւ պատուանը, շաններու փոխանակութեան երկար շրջանը եղաւ ատիկա։ Այդ տարիներուն՝ Կ. Պոլսէն անցնող կամ հոն բնակող Եւրոպացիները միշտ կը զրուատէին Երլազ Գէօշկի ազնուական ողին, այդ պալատին քաղցրութիւնը եւ մէջը բնակողներուն քաղաքավարութիւնը։ Սուլթանէն բան մը ստանալու համար՝ շողոքորթութենէ սրիշ Միջոց չի կար, ու ան ալ, իր կողմէն, հրաշալի կերպով ճանչնալով եւրոպացիին սիրաը, ծաղկի փոխարէն ծաղիկ, ժապաւէնի փոխարէն՝ ժապաւէն, սոկեզօժ խօսքի փոխարէն սոկի կը շոյշէր ամէնուն։ Ատով է որ, ընդհանուրին հաւանութեամբ, կրցաւ բնաշինչ ընել իր ժողովրդին մնացած վերջին ազատութիւնները, Բ. Դուտը վերջնապէս Պալատին սարուկը դարձնել, իր Խալիֆայի տիաղսը վերակենդանացնել, եւ վերահաստատել ասիական յորջորջումները գործնք իր մեծ-հայրը՝ սուլթան Մահմուտ՝ այնքան կ'ատէր։ Դարձաւ եղաւ նորէն «Աստուծոյ ստուերը երկրի վրայ», «յալթականը», «բարեգութը», եւ զեռ ուրիշ շատ մը բաներ։ Ալ կարծեց որ ոչ մէկէն վախնալու բան ունի, ու քիւրտները, զինուորները ու սօփաճիւնները արձակեց իր հայ ժողովրդին վրայ։ Իր զարմացումը այնքան մեծ եղաւ որքան իր զայրոյթը երբոր մարդիկ, իր երկրպագողներուն ամբոխին մէջէն, քաջութիւն ունեցան իր դէմը կանգնելու եւ բողոքելու յանուն քաղաքակիրթ Եւրոպային։

1895ի վեպերը տախնուլայ ըրին գերման պիւանագիտութեան կարգադրութիւնները։ Հայկական գործերուն մէջ ո եւ է աւանգութիւն չունենալով, ինչ զիրք բռնելը չէր գիտեր, մանաւանդ որ աւելի խոշոր շահեր երկրորդական զիրք մը կուտային իրեն։ Կոնրը երկու պետութեանց, Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ էր, զէմ առ զէմ եկած երկու հսկաներու կոխ մը։ Անգլիոյ հանրային կարծիքը ուղղակի միջամտութեան հրաւեր կը կարգար։ Բայց Լոպանսֆի իշխանը, որսշած ըլլալով Անատոլիի խոտուութիւնները լսի ներքին գործ մը նկատել, աշխարհի ընդունել ատաւ ի'ր լուծումը, որ զուտ պիւանագիտական էր, չաճապարող ու անվաս լուծում մը, որ ուրիշ բան չէր բայց եթէ փոփոխութիւններ ու բարենորոգումներ խոտանալ, ո'չ մին ո'չ միւսը հարկադրել սուլթանին, եւ վերջապէս միւս պետութիւնները կանչեց հիւանդին օգնութեան։

Գերմանիա նորէն մէջտեղ ելաւ, բայց ա'լ առջի եւ անդը ու ձեռնարկու ողին չունէր։ Չէր կրնար հոշակել թէ ինքն էր միակ բարեկամը սուլթանին, որուն Ռուսիա այնքան կարեւոր ծառայութիւն մը մատուցած էր բիշ առաջ։ Բանալը, զոր ինք փորձած էր նոր մէթոտով պատերազմի պատրաստել, Անատոլիի արիւնալի շուկաներուն մէջ գիտենք թէ ինչ կ'ընէր։ Միեւնոյն ատեն Թիւրքիոյ անտեսապէս տիրանալու գործը առեւտրական տաղնապէս ընդմիջուած էր։ Ռսկեհանքերու շահագիտութիւնը ահռելի քայքայում մը առաջ բերած էր, անանկութիւն անանկութեան վրայ՝ Արեւելքի ամէն նաւահանգիստներուն մէջ, ճամբաները, նաւահանգիստները գոց՝ ընդհանուր անապահովութեան վախէն։ Գերմանական քաղաքա-

կանութեան մղիչ մեծ ուժը, շահու յոյսը, անհետ եղած էր, եւ անոր տեղ անձկութիւնը կը տիրէր Անատուրի եւ Մակեդոնիոյ երկաթուղիներուն վրայ ծախսուած միլիոններուն, վաճառականներուն բացած խոշոր վարկերուն եւ դործարանատէրներուն անեղիքներուն մասին: Այդ 1895 աստուոյն աշնան, ապապան ալ աւելի մայլ կ'երեւնար: Գարնան դարձին, երբ ճամբաները բացուէին, ինչ տեսարան մը պիտի բացուէր կատարածի վայրերուն վրայ, ամէնէն մահաշուք վայրերը զորոնք երբեք տեսած ըլլայ մարդկային աչք մը: Ուժեղ միջամտութիւն մը անհրաժեշտ կը թուէր, եւ Պոլիս ընդհանրապէս սա կարծիքը կը տիրէր թէ Ռուսիա Անգլիոյ առաջարկութիւնները մերժած էր՝ պարզապէս ինքը միայնակ զործելու համար գարնան: Թիւրքիան կորսուած էր, սուլթանը գտտապարտուած: Մեր կը մնար ան ատեն Պ. Ֆոն Հացֆէլտի ծրարիբը:

Եւ սակայն, գերմանական քաղաքականութիւնը բնաւ ձեռքէ չձգեց ծայրագոյն խոհեմութիւնը, ու աչքը չզատեց բնաւ Երւստղի բլուրէն, ուր կեդրոնացած էին իր բոլոր համակրանքը եւ յոյսերը: Երբոր եւրոպական միաբանութիւնը իւրաքանչիւր ազգի համար իրաւունք ձեռք բերաւ երկրորդ պահականաւ մը մասնակցութիւնով, Գերմանիա միայն չօգտուեցաւ այդ թոյլտուութիւնէն. չէր ուզեր սուլթանին դիրապագածութիւնը վերաւորել թնդանօթ մը աւելի մասնակցով: Պոլսոյ առջեւ: Սակայն ստիպուեցաւ մասնակցիլ միւս պետութեանց բաւական չոր ու կրտուել ձեռնարկներուն՝ երբոր կրետական ապստամբութիւնը պայթեցաւ, եւ երբոր Ապտուլհահ փաշա իր խաղաղացման արիւննուշտ զործը սկսաւ: Բայց գարունը եկած էր, ձիւները հալած էին, ճամբաները բացուած էին, կատարածի դաշար կը պարզէր ամէնէն մահաշուք տեսարանը զոր երբեք տեսած ըլլան մարդկային աչքերը. եւ, ո՛չ մէկ պետութիւն սարսափի աղաղակ մը արձակած էր. ո՛չ ոք միջամտած էր:

Կացութիւնը փոխուեցաւ ան ատեն, երբ հաստատուեցաւ թէ Եւրոպական Համաձայնութիւնը ապիկար բան մըն էր, ո՛չ անհատապէս եւ ո՛չ հաւաքապէս պիտի զործէր, ո՛չ այսօր, ո՛չ ալ վաղը: Սուլթանը շատոնց գիտէր որ այդ համաձայնութիւնը անկենդան մարմին մըն էր. ուստի, առաջին օրէն, այնպէս վարուեցաւ իբր թէ հիւանդ մարդերու հաւաքում մը ըլլար ան: Իր ամէնէն մտերիմ խորհրդակիցները անդադար կը կրկնէին իրեն. «Արիացէք, վեհափառ տէր, գիմարեցէք. այդ վեցը մէկանց նուազ վաճառուոր են քան եթէ մէկ հոգի ըլլային»: Բայց թէ սուլթանը եւ թէ իր խորհրդակիցները ո՛րակից ստացած էին այս հաւաստիքը: Ռուսիոյ խոստումները բաւական պիտի չըլլային խաղաղեցնելու սուլթանը, որ այնքան կասկածոտ է դարաւոր թշնամիին նկատմամբ: Մնաց որ, երբոր ա՛լ չափը անցաւ, երբոր վարձուած մարդասպաններուն մոլեգնութիւնը կ. Պոլսոյ վրայ թափեցաւ 1896 օգոստոս 14 26ին, երբոր Լուպանօֆ իշխանը յաջող օրը մնաւ, եւ երբոր Ռուսիա ա՛լ վերջապէս բարկացաւ, սուլթանը ո՛չ մէկ վայրկեան ինքզինքը մինակ զգաց: Գերմանիան քովը ի վեր կեցած էր:

Կ. Պոլսոյ մեծ ջարդէն մէկ քանի օր ետքը, Վիլհելմ կայսրը իր լուսանկարը զրկեց Ապտուլ Համիտի. զետեւ պահելով, որոնք ամենքն ալ արեան հոսիլը տեսած էին իրենց դռներուն առջեւ, իրենց բողոքները կը զրկէին ա՛յն պիտի խօսքերով որոնք սաստիկապէս կը վիրաւորէին տասնըհինգ տարիէ ի վեր անուշ լեզուներու վարժուած վեհապետ մը: Մանաւանդ, Պէօյիւքտէրէի հեռադատ ան յանձնուեցաւ «Նորին վեհափառութիւն Ապտուլ Համիա Բ, Երւստղի Բէօշի» ուղղուած բաց հեռագիր մը, որ սպառնալից հրաման մըն էր: Գերմանիոյ զետեւնը միացաւ այդ ձեռնարկներուն, եւ նոյն իսկ, արտաքին զործերու նախարար Թէվֆիզ փաշայի ներկայութեանը, իր զայբոյթը թափեց անխնայ: Բայց Գերմանիոյ վեհապետին սիրալիր վարմունքը գարմանեց զետեւնին ինքնարուզիս զործը, եւ աւելի՛ ուշադրութիւն պարձուցին գերմանական պատուիրակութեան սպաններուն ապահովիչ ընթացքին՝ քան թէ զետեւնին նախաձեռնութեանը:

Բրուսիացի զինուորականի մը ուղեղին մէջ՝ կարգապահութեան մասնաւոր սղի մը եւ իշխանութեան սկզբունքին յարգանք մը կայ, որուն առտիճանը մենք չենք կրնար չափել: Օսմանեան ծառայութեան մէջ գտնուող գերման սպաններէն մին՝ առաջին վայրկեանէն՝ ջարդերը բացատրեց իբր դերադոյն արդարութեան գործ մը: Իրեն համար, Պանք Օթոմանի մէջ մէկ քանի ուսմբերու պայթումը՝ ամէն բան կ'արդարացնէր: Իր աչքին, մէկ կողմ անիշխանութիւն կար, միւս կողմ՝ հանրային իշխանութիւնը, եւ իր կարծիքը հիմեց Գուրանի մէկ տունին վըրայ. «Երբոր զօրքը անկարող է բարեկարգութիւնը վերահաստատելու, ժողովուրդը տունէն դուրս ելլելու է դաւազաններով:» Գուրանը իրօք այսպիսի պատուէր մը կը բովանդակէ: Այս միջադէպին վրայ չի պիտի խօսէինք եթէ հետեւանքներ ունեցած չըլլար: Այդ սպան Պալաս կանչուեցաւ եւ Պերլին զրկուեցաւ Վիլհելմ կայսեր տանելու մասնաւոր նամակ մը: Չինուորականը Գերմանիա երթալուն՝ հոն տարածեց Կ. Պոլսոյ զէպքերուն մասին իր զաղափարները. յարգանք քարոզեց կանոնական լախտին համար, որ իշխանութեան գործիք մըն է: Գերման լրագիրները ընդունեցին իր յայտարարութիւնները եւ նոյն իսկ յօդուածները:

Գերմանիա ա՛լ իր խաղացած գերը ծածկելու պէտք չունէր: Վիլհելմ կայսեր մեծարանքի ցոյցերովը, իր քաղաքային ու զինուորական պաշտօնակաշխերուն հազարումէկ պղտիկ հաճոյակատարութիւններովը, Գերմանիա կը գտնար իր հին ուղղութեանը որ է ամէն բան սուլթանին անձնական շնորհքին պարտիլ: Ջարդերուն ատեն Պ. Նէլիտօֆի ազնիւ վերքը սուլթանին քէնը հրաւիրեց Ռուսիոյ վրայ: Նորէն, ասպարէզը ազատ էր գահուն սաքը. Գերմանիա հոն տեղաւորուեցաւ: Ա՛լ սուլթանին ինչ հոգն էին Եւրոպայի մնացեալ պետութեանց սպանալիքները: Ռուսական նաւատորմը կրնար գալ Վստփորի բերանը. Արշիպեղազտը կրնար լեցուիլ եւրոպական նաւատորմներով. թիւրք ժողովուրդը, տանիքներուն վրայ ելած, կրնար, վախէն ցնորած, ծախն բացերը մուկ մը տեսնե-

լուն պէս, դռնի. «Կուգան կոր, կուգան կոր...» Սուլթանը, ինք, գիտէր թէ երոպական համաձայնութիւնը կեանք չունէր՝ առանց պետութեանց միաձայնութեանը. մէկուն անհամաձայնութիւնը՝ կը բաւէր զայն անգամալուծելու: Երկար աշուն մը, երկար ձմեռ մը անցան, ամենակատարեալ տահնութեան մէջ: Անգու անգագար, Հայերը նաւահանգիստները կ'իջնէին ապաւէն փընտոնելու օտար գրոշակներու տակ, ու յետոյ, աշունով-տեղով, կ'երթային դէպի աշխարհի շորս կողմը: Բոլոր գրացի երկիրները իրենց դռները ազնուօրէն բացին այդ վտարանդիներուն առջեւ, բացի Ռուսիայէն, որ Երբեակ Նիզակահցութեան յառաջապահէ՝ Հոնէնտլլերնի մը մականին տակ:

Իսլամական ապստամբութիւնը կրետէի մէջ պայթեցաւ 1897 փետրուարի սկիզբը: Պատերազմը անխուտափելի դարձաւ Յունաստանի եւ Թիւրքիոյ միջեւ: Կ. Պոլսոյ մէջ յայտնի եղաւ թէ՛ սուլթանը, ինչ ալ ըլլայ, չէր ուզեր այդ պատերազմը: Բայց Գերմանիա կ'ուզէր: Կ'ուզէր օսմանեան զինուորական անունը վերականգնել, որովհետեւ կը բազմար տեսնել վերականգնացած ոյժ մը որուն վրայ ի գործ պիտի դնէր իր բոլոր ազդեցութիւնը. ան ասեմ, Թիւրքիան իր ափին մէջ առնելով ի նպաստ իր քաղաքականութեան եւ նիւթական շահերուն, Արեւելեան խնդրին մէջ իրաւարարը պիտի ըլլար: Միւս կողմէ, կ'ուզէր Թիւրքիայութիւնը մը առաջ բերել Սլաններու պաշտպան Ռուսիոյ եւ հելլենասէր Ֆրանսայի միջեւ, Թիւրքիայութիւնը որ Գերմանիոյ միջնորդութիւնը առաջ պիտի բերէր եւ իրեն առիթ պիտի տար զուելը խոթելու Չարին եւ Ֆրանսական Հանրապետութեան միջեւ: Գործնաւ, առիթ պիտի ունենար պաշտպանելու գերմանացի գրամատեններուն շահերը, որոնք վտանգուած էին Յունաստանի մէջ: Միեւնոյն ատեն, Վիլհելմ կայսրը յագեցում կուտար իր քրոջ՝ Յունաստանի գահաժառանգ իշխանին կնոջ՝ դէմ ունեցած սխիւն, օրթոտոքս կրօնքը ընդունած ըլլալուն համար: Վերջապէս, շատ կը ցանկար փորձել թընդանօթները եւ հրացանները զորոնք Թիւրք բանակին մատակարարած էր:

Գերմանիա բնաւ զազանի չպահեց իր զիտուծները. իր հովանաւորութեանը տակ, Թիւրք զինուորական կուսակցութիւնը մը ծնաւ որ արձակ համարձակ Գերմանիոյ կը կոթնէր: 1897 մարտի սկիզբէն, Կ. Պոլսոյ մէջ ամէն մարդ գիտէր որ Գերմանիոյ զետպանատունը կը խրախուսէր այդ զինուորական կուսակցութիւնը, որուն պետքը կը պարծենային թէ Վիլհելմ կայսեր բարձր բարեացակամութիւնը կը վայելեն. մեծ իրարանցում մը կը տարածուէր իսլամական զանգուածին մէջ. քնացած հայրենասիրութիւնը կ'արթննար կայսրութեան ամէն կողմը. ժողովուրդին մէջ, որ զազանի ոստիկանութեան զրուծեան տակ անէացեր էր, սուրբ բորբոքում մը կը տիրէր, որ վերջէն անձնուիրութեան շատ զեղեցիկ օրինակներ տըլաւ: Սուլթանը դեռ կը դիմապրէր: Բայց Գերմանիոյ զետպանատան առաջին թարգմանը քովէն չէր բաժնուեր: Ըսուեցաւ թէ Վիլհելմ կայսեր մէկ հեռագիրն էր որ վերջ ի վերջոյ համողեց Ապարիւ Համիալը նաւատորմիզը

զուրս հանելու. հապշտապ վերանորոգուած անկար գրահատները մարտ 20 ին ձաքայ ելան: Յունաստանի ճառթիրը այդ միջոցին Գերմանիոյ օշնութեան հասան: Կոբը սկսաւ: Կ. Պոլսոյ Թիւրքերուն եւ Գերմանացիներուն միջեւ յոյսերու եւ խանդալառութեան ներդաշնակութիւն մը հաստատուեցաւ: Գերմանացիներուն զրդումը Յոյներուն դէմ աւելի ոստիկ էր քան Թիւրքերունը: Ապրիլ 20ին, Կ. Պոլսոյ բոլոր զետպաններուն պաշտօնէութիւնը քարափը իջաւ՝ հրաժեշտ տալու համար Յունաստանի զետպանին որ նաւ կը նսաէր: Գերմանական զետպանատունէն միայն մարդ չի կար այդ քիչ մը տիրուր հրաժեշտին, ու հելլենական զետպանատան անդամներէն մին նաւ մտած ատեն կ'ըսէր. «Կ'երեւայ որ Գերմանիոյ հետ ալ պատերազմ ունինք:»

Մէկ քանի օր ետքը, կրումպըով փաշա ամէնէն առաջ Լարիսա կը մտնէր: Չարը այդ միջոցին անձնապէս միջամտելով զինապազար մը կնքել տաւաւ: Բայց Գերմանիա յոյս ունէր կոբը վերսկսել տալու, ու ջանագիր եղաւ բանակցութիւնները ձգձգելու: Մայիս 22 ին, զետպանները ծանուցագիր մը խմբագրեցին՝ բանակցութեանց սկսելու համար, ու այդ ծանուցագիրը մայիս 23ին միայն կրցաւ յանձնուիլ, որովհետեւ Գերմանիոյ զետպանը մինչեւ ան ատեն արտօնութիւն ստացած չէր զայն ստորագրելու:

Սուլթանը անձնապէս ժամ առաջ գործը լիցնել կ'ուզէր: Բայց Գերմանիա աճապարելու պէտք չունէր: Համբերութեամբ, իր նպատակին հասաւ, որովհետեւ ամբողջովին ինք խմբագրեց հաշտութեան պայմանները: Ատով, արժանապատուութեան գահացումներ կուտար սուլթանին եւ զինուորական կուսակցութեան՝ սահմանազիւն երկայնքը հողի կտորներ թողլով Թիւրքիոյ, եւ Թիւրքիա բնակող հելլեն հպատակներուն Գաբիլիպոսիոնի իրաւունքները վերաքննելու արտօնութիւն թողլով Թիւրք կառավարութեան: Բայց բուն շահը Գերմանիան քաղեց. «Թեսալիոյ գրաւումը Յունաստանի հին պահանջատէրներուն (գերման) երաշխիքն է» կը գոչէր Պ. Ֆոն Մարշալ, և պիտի տեսնենք որ ուրիշ շատ բարիքներ ալ ձեռք բերաւ՝ Թիւրքիոյ «խաղաղապէս տիրելու» նպատակով, որ կէս դարէ ի վեր Գերմանիոյ երազն է:

**ԺՈՐԺ ԿՈՂԻՍ**

(Մնացեալը յաջորդով)

**ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ**

Մարտէյլ, 29 սեպտեմբեր

Հայ անձնասպանները. — «Ետպառար» ներ. — Յունաստանը ժառանգորդներ. — Խարոյկի արժանաւոր մը. — Չէյթուն եւ կրօնք:

Թիւրքերու մէջ, իբր զանազան վէպը մը սքօղուած, աչքիս զարկաւ հայ վարձապետի մը անձնասպանութեան լուրը: Չեմ ճանչնար այդ խեղճ Թէրզեանը որ Պոլիս, Խաղաղ, կիանքը վերջացուց երեսի վրայ ձգելով կինը ու դուստկները: Երկար ստենէ ի վեր ամսական չէր աւած,

«Վ զիտէ ան ալ քանի զուրուշ, 200էն 300ին մէջ բան մը անշուշտ. դանձուովն համար թաղական խորհրդարանը երթալով գալով ալ հոգին բերանը եկած էր: Իրա՛ւ կեանքի ձանձրոյթը:

Սովորական դիպուած մը չէ, մանաւանդ մեր մէջ, ինքնայօժար մահը: Ամէն անգամ որ հայու մը անձնասպանութիւնը կ'իմանանք եւ «ինչու»ն կ'ուզենք փնտրուել, ահա ընկերական փտութեան կմախք—ուրուականնեւրը կուգան դէմքնիս կը կանգնին ու կ'ըսեն. «Ատոնք մեր սնունդներն են, մենք ատոնցմով կ'ապրինք:»

Ընկերական փտութեան զոհ մը չէ՞ խասգեղի առ խեղճ վարժապետը որուն եղբրական մահը ազգային վկայարանութիւն մըն է: Բանաստեղծը երգեց հայ վարժապետին անօթութիւնը, վիպասանը նկարեց անոր բազմատանջ կեանքը, հրապարակագիրը ցասկոտ յօգուածնեւրով մտրակեց հանրային անտարբերութիւնը իր կրթիչներուն նկատմամբ, առանց մոռնալու երեսուն տարիէ ի վեր համբաւաւոր յանկերզը՝ «Գերմանիա իր վարժապետնեւրուն պարտական է Ստտովան ու Սըտանը.» ու այդ ամենը արդեւք մը չէ որ հայ վարժապետը չշարունակէ իր սովալլուկ կեանքը, իր գերագոյն յոյսը դանակի մը վրայ միայն դրած: Հայ միտքը ազգային կեանքի ամէն բարենորոգումի դէմ ապստամբ է:

Առայդ, կարին երիտասարդ մըն էր Այվազեան Եղիշէ վարդապետ որ Տրապիզոն պատուհանէ մը ինքզինքը վար նետելով մեռաւ: Գաւառական պղտիկ քաղքի մը լեզուագարութենէն ահնաժող, ուզեց պահ մը լրջաբար կուսակիցն մնալ: Իրեն համար չէր սակայն «սր կարողն է ասնիլ տարցի»ն. առէն վեր կոխ մը փորձեց ընուութեան դէմ. ջախջախուեցաւ: Բայց հակաբնական օրէնքներու մեծագոյն զոհը գուցէ այդ խեղճ մարդը չէ. զոհը անոնք են որ կը հարկադրուին երեսնին զիմակ մը իբր գերմարդկային էակներ ներկայանալ. խորտակուած կեանքը անոնցն է, զի առնական կորովը անհետ եղած է մտքերէ ու սրտերէ որոնք ժողովրդին առջեւ կեղծաւորելու պարտականութեան մէջ կը գտնուին: Մեր ամուրի եկեղեցականներէն քանի՞ վարդապետ կամ եպիսկոպոս իրենց սխտին հաւատարմութեամբ, շնորհիւ անշուշտ բնութեան ներողամիտ մասնակցութեան, ազատ մնացած են ծածկադիմութեան տխուր հարկէն. ու ասոնք ալ ուժեղ են, խրոխտ հանրային կեանքի մէջ: Եւ սակայն «Վ է որ պիտի համարձակի նոր եկեղեցականութեան համար վերանորոգել քրիստոնէութեան առաջին գարբու բարքերը. «Վ կրնայ պնդել որ Լուսաւորիչ ու իր սերունդը հիմակուան մեր հայր սուրբերէն ու սրբազաններէն նուազ քրիստոնեայ եղած ըլլան: Պարտաւորիչ կուսակրօնութեան դատին ի նպատակաւ հառաքիւղէր. «Հայ ժողովրդին պատմական կեանքը տակաւին մարտիրոսութիւնն է. իսլամութեան հետ պատերազմը կը շարունակուի. յառաջընթացը պրօզակալիքները ամուրի եկեղեցականներն են. ընտանեկան ամէն կաշկանդումէ ազատ մնալով պիտի կրնան ասոնք աներկիւղ դահճին տապարին առջեւ նետուիլ ու

պահպանել հայ ժողովուրդը:» Բայց 19րդ դարուն վերջերը հին դարերու նահատակութեան թուականին վերանորոգումը քանզեց այդ փաստարանութիւնը. ու տերաւորներն ալ կտոր կտոր յօշոտուեցան իրենց հաւատքին վերայ հաստատ մնալով: Կրօնքի քանդիչ պիտի չի չուին անոնք որ պահանջեն ատ մեծ վերանորոգումը, փրկութեան խարխիւ հայ եկեղեցականութեան համար:

Իբր կրօնքի քանդիչ մասնանիչ եղան 1891ին անոնք որ աւելի սահմանափակ շրջանակի մը մէջ ներքին վերանորոգումներ պահանջած էին, — քանի մը հաստատուն օրէնքներ ամուսնական ինքզիններու համար եւ բարեփոխութիւն դատաստանական խորհրդի կազմութեան մէջ: Նորէն անձնասպանութիւն մըն էր այդ բարենորոգումներու պահանջումին շարժառիթը: Նոյն տարուան ամառը պատշգամէն վար նետուելով մեռաւ տարիքոտ մարդ մը, ակնցի Գրիգոր աղայ: Կնշմէն բանուած կ'ապրէր. դատաստանական խորհուրդը մարդուն աննպատակ լծի մը տուաւ, յայտարարելով թէ անբարոյական կեանք մը կը վարէ. դատապարտեալը չկրցաւ տակալ պաշտօնական այդ յայտարարութեան, քմածին ապացոյցներու վրայ հիմնուած: Խեղճ ակնցիին խելագատակին մէջ չէր կրօնար սղմիլ թէ իր տարիքը մարդ մը, գաւակներու տէր, ապրի հոմանիի մը հետ. ինչ կրնար ընել սակայն պատերազարանի վճռին դէմ: գործնական բեկանումի դիմեց, իր կեանքին բեկանումովը: Ինքնակամ այդ մահը վճուարի մը անիրաւութեանը էն մեծ ապացոյցը չէր: «Հայրենիք» որ նոր սկսած էր հրատարակուիլ, «Մարգասպանութիւն մը» վերնագրին տակ խմբագրականով մը յայտարարեց թէ Գրիգոր աղան սպաննողը ազգն էր: Անիրաւ վճիռը որ մահ առաջ բերաւ՝ դիպուածական օխալում մը չէր, այլ շատ ընական հետեւանք մը մեր վարչական գրութեան: Անգործ մարդերու զբօսանքի ժամադրաւոյցը մը այդ դատական խորհրդարանը, մեր ընտանեկան կեանքին գերագոյն ատեանը: «Ճանրմ, Ենայլէ Էֆէնտին գործ չ'անի, տունը սիրար կը նեղանայ. Գատաստանական «խորհրդի անդամ կ'ընտրենք, կ'երթայ կուղայ էյլէն» «միշ կ'ըլլայ:» Այս սկզբունքին համեմատ ընտրուած էին ԳԱԻ մեր դատաւորներէն ումանք, այս սկզբունքին առաջնորդութեամբ ընտրուած էին ուրիշներ երեսուն տարիէ ի վեր: «Անյարմար մարդը, անյարմար տեղը» ահա մեր հանրային կեանքը զեկավարող ազգային նշանաբանը: Ու չփտիւնք:

\* \* \*

Քատուր դար մը առաջ, զեռ հանրային կեանքի չը մասնակցող, կը փափաքէի մօտէն ճանչնալ մեզի առաջնորդողները: Օր մը շուքնաւին մէջ ծանօթացայ նոր ընտրուած Ուսումնական խորհրդի ատենապետի մը. երբ սկսայ խօսիլ, ատենապետ էֆէնտին թըքերէն յայտարարեց թէ հայերէն չէր հասկնար: Ապշած հարցուցի,

— Ինչպէս ուրիմն ուսումնական խորհրդին խնդրամ եւ ատենապետ էք:

Մարդը ձեռքերը բացած, ու գլուխը զեպի աջ ուսը հակելով, դառնական թրքերէնով մը ըսաւ .

— Ես Կաթողիկոս եմ, Կաթողիկոս : (Շինեցին, Կաթողիկոս, շինեցին) :

Քանի մը օր վերջը հանդիպեցայ բազմաթիւ ժողովի ազգայնական մէկ անդամին, եւ այսօրինակ ընտրութեան մը համար զարմանքս յայտնեցի .

— Ինչքան ալ բծախնդիր էք, պատասխանեց համարուած մարդու մը ձայնովը . մարդը ընկերական զիրքի տէր է, ազնիւ զգացումներ կը տածէ, եւ սա լի ս է ունի :

Այդ ամէնը սակայն ուսումնական խորհրդի ատենապետէ մը պահանջուած յատկութիւններ չեն : Յետոյ, հանրային կեանքի կոնկրետ մէջ ինչքան ակադեմիկ կը դարձնուի այդ « Կաթողիկոս » ի անմեղոնակ շեշտը, ամէն անգամ որ կոնկրետ մը կը մղէինք նոր ընտրութեան մը դէմ, « Կաթողիկոս » հիւանդանոցի հոգաբարձուները, « Կաթողիկոս » գրական մրցանակի յանձնաժողովի անդամները, « Կաթողիկոս » եւ նոյն իսկ խեղճ Աշխատանքի Խորհուրդի անդամները որ պատրիարք ընտրուելուն համար ս' եւ է յանցանք չունեն : \*

« Կաթողիկոս » ներու գլուխ գործոցը ան թափարեան Գարեգին վարդապետը որուն մահուան լուրը Պոլսէն կը հաղորդեն : Իր սեւ մօրուքին տակ ատ շատ հինաւորեց եւ կեղեցականը անխօսուկ լեզու մըն էր, անուշ քաղցրաբարոյ մարդ մը, Սան-Սթեփանոսի ճգնաւորը : Ազգին հոգեկան, մտաւորական զարգացումին նպաստելու կոչուած ամէն յանձնաժողովի անխօսուկ անդամն էր : Անվերջ ամէն նիւթերու ներկայ կը գտնուէր, հացն ու թողութի մէջ քիչ մը թա հին հ էլ վան միշտ ձեռքը . լոկի կը մտնէր ժողովատեղին, միակ յոգնութիւնը մօրուքին վրայ հէլ վային թափթփուցները թափուէն էր . լոկի դուրս կ'ելլէր : Իզմիրեանց զրական մրցանակը բաշխող յանձնաժողովին ալ անգամ էր, — բնականաբար : Այս տարօրինակ ընտրութեան գաղտնիքը փնտռել ուզեցի . թափարեան վարդապետ ս' չ սա լի ս է էր, ո'չ ալ ընկերական զիրք ունէր :

— Երեք հազար ոսկի ունի, ըսին, ամէն յանձնաժողով ձեռքէ ձեռք կը քաշէ զինքը, յուսալով որ ունեցածը իրեն ժառանգութիւն կը մնայ :

Ու տարիները կ'անցնէին եւ մարդը չէր մեռներ, չէր մեռներ : Եւ հիմա որ հանրային ակնկալութիւնը վերջապէս պատկուեցաւ, ահա տրտունջի ձայներ կը բարձրանան յուսալար ժառանգորդներէ . թափարեանի ազգականները միայն պիտի վայելեն այն դուրս մարդ որուն ակնկալոյց կը մնար ամբողջ ազգ մը : Ընդունինք թէ միամտութեան երեւոյթին ներքեւ սրամիտ մը ծածկուած էր այդ վարդապետին մէջ : Իր հարստութեանէն բաժին մը հանելով այն ամէն կրթական, գրական, հոգեւորական ժողովներուն որոնց անդամակցած էր Գարեգին վարդապետ, պիտի չնմանէր մեծափարթամ սեղանաւորին որ իրմէն հարստութեանը ընդհանուր բաշ-

խուժը պահանջող հասակակորդեանին կը պատասխանէր . « Ա'ն քեզի ոսկի մը, բաժինից այսքան կ'իյնայ : » Ու ինչ ալ սիրուն խաղ խորագէտ այն ամէն ուսումնապետներուն, բարձրաշուքներուն, վեհափայլներուն որոնք ձեռքէ ձեռք կը խլէին այդ խեղճ վարդապետը, հասկցնելով սակայն թէ իրեն ընծայուած պատիւները մուշտակին համար էին : Նրբին վրիժառուութիւն որ մահուան ժամուն ձանձրոյթը քիչ մը փարստելու ծառայեց անշուշտ :

\* \* \*

Մարդու չձգեց, կամ աւելի ճշգրիտ բացատրութեամբ, հայ հասարակութեան կամ հայ անհատի չձգեց, այլ Յոյներուն թողուց իր ճիս գրապարանը կոստանդեան, իրուն մահուան լուրին հետ նորէն կը լսուին յուսալար ազգ-ժառանգորդին տրտունջները : Ներքի է ենթադրել թէ իր գրքերը հայ հասարակութեան մը կտակելով կոստանդեան իզմիրի Ս. Ստեփանոս եկեղեցիին մէջ միջնադարեան խորոյկի ժը վառելանութեամբ միայն հայթայթած պիտի ըլլար հայ ժողովուրդին : Ուրիշ ինչի՞ գործածել եթէ ոչ հրապարակաւ կրելու ատ բոլոր գրքերը որոնց ընթերցումին եւ ուսումնասիրութեանը ծնունդն էր « Մէթոս »ը : Քսան տարի առաջ « Մէթոս »ը Հայուն բերանը ան նշանակութիւնը ունէր ինչ որ յեղափոխական թերթի մը անունը կը նշանակէ հիմա թիւրքերէն շրթներուն վրայ : « Մէթոս » կը կարգայ, « Մէթոս » կը կարգացնէ՝ հալածանքի կարգախօսը եղաւ : Թաղականի խողովութիւնները, հոգաբարձութեան կոնկրետ, բերնէ բերան ազգային հացի յափշտակութիւնը՝ « Մէթոս » կը կարգայ՝ « Մէթոս » կը կարգացնէ յանկերգովը կը սկսէր, անով կը շարունակուէր :

Գաղափարի շատ յանդուգն յեղափոխական մըն էր այդ կոստանդեանը որ կը համարձակէր ժողովրդի մը մտքին մէջ դարերէ ի վեր արմատացած աւանդութիւնները խլելու փորձը ընել, ու սրտին մէջ գործովալիբ հրով առք պահուած զգացումները մարել, զիտնալով թէ փոթորիկը պիտի պայթէր իր գլխուն վերեւ, ու յաղթանակի յոյսն ալ իր գորավիզը պիտի չըլլար : Բայց խիզախ համոզումի ամէն արտայայտութիւն արդէն ինքն իր մէջ կը պարունակէ գոհունակութեան զգացումը :

Հասարակ հոգեբանութիւն մը պիտի չըլլար կոստանդեանի ստեղին ալուցներուն պրպտումը : Մօտէն չկրցինք ճանչնալ այլ հետաքրքրական միտքը, եւ հարցընել՝ « Կրօնական ճշմարտութիւնը կը փնտռես, բայց կրք գտնել կարծես, յետոյ... » Ահա մեծ հարցականը որ ամէն հայ խորհողի մտքին կրնայ ներկայանալ երբ կրօնական ճշմարտութիւն մը գտնելու եւ հայ ազգին զայն քարոզելու փորձութիւնը կը զգայ : Ազգային կրօնքը դեռ ուժ մըն է ազգին պտհպանութեանը համար . ու այդ « ազգային պահպանութիւն » բացատրութիւնը զուտ մոլեռանդութիւն մը չէ հայ բերնին մէջ : Հայ ժողովուրդը իր սեփական ազգայնութեամբն է որ պիտի կարենայ աւելի զիւ-

բութեամբ զարգանալ ու բարձրանալ: Երբ վերջերս իմացանք թէ Չէյթունի մէջ «Լատինական ճշմարտութիւնը» զաւանել տալու փորձեր կ'ըլլան, մեր առաջին մտասանջութիւնը եղաւ «Ա՛հ Չէյթուն ալ պիտի կորսուի ապագային համար»: Ո՛չ ապաքէն նոյն մարդիկն են, նոյն լեռները, եւ սակայն հաւասարք մը փոփոխութիւնը նկարագրի փոփոխութիւն պիտի ծնի: Այդ վայրագ լեռնականներուն բարոյական ուժը կրօնական մելեռանդութիւնն է. ամէն համոզումի, զգացումի տկարացումը ընդհանուր թուլութեան նշան է: Կրօնականէն ետքը քաղաքական թուլութիւնը:

Պատահաւ մը հացի համար Չէյթուն իր կրօնքը փոխէ. ինչո՞ւ իր ամբողջ կեանքին համար ալ իր ազգութիւնը օր մը փոխելու փորձութեան չենթարկուի: Դուրը ինքն ալ չէ՞ հասկցած այս ճշմարտութիւնը: Այդ փորձութեան լսկ հաւանականութիւնը սրտեհնիս կը տալնապեցնէ, ու կը յիշենք այն հին օրերը ուր կրօնական տարածումի մը փորձերը է. Պսիլս թէ՛ Դրան թէ՛ Պատրիարքարանին մեծ փորձանքի մը սպառնալիքը կը դառնային:

Յակորոս պատրիարքին ատեն օր մը Դուրը կը վրդովի, տակն ու վրայ կ'ըլլայ եւ անապարանքով պատրիարքը կը հրաւիրէ: Ամերիկայի զեսպանը Չէյթունցի կոչուած վայրենի ժողովրդի մը պատժուիլը պահանջած է: Ստաբազամը ժպիտը հազիւ զսպելով գործը կը բանոյ պատրիարքին: Ամերիկացի միսիոնար մը ճշմարտութիւնը բարոզելու համար Չէյթուն մտեր է, ու ժողովուրդը հրաւիրեր է վիճարանութեան: Իշխանները ժողով գումարելով իրենց քով կը կանչեն պատուելին, ու մէկիկ մէկիկ ախոսները քաշելով ափը կը լեցնեն, «Ահա՛ քեզի ճշմարտութիւն» կ'ըսեն, ու կը ճամբեն: Ամերիկեան դրօշակին անպատուութիւն: Ստաբազամը, սր արկածէն դժգոհ չէր մնացած վասն զի օտար ոտնձգութեան մը դժար դրեց էր, պատրիարքը կը յանդիմանէ «վասն ձեւակերպութեան» ու ապագային ապահովութեան համար գոհացուցիչ երաշխաւորութիւն կ'ուզէ:

— Ի՞նչ կրնամ ընել, կը պատասխանէ պատրիարքը. զեսպանը կ'ըսէ թէ Չէյթունցիները վայրենիներ են, զուրջ ալ անանկ կը հաստատուէր, ես ալ բողոքովին համառիտ եմ. ասանկ վայրենիներէն հետո մնալը աղէկ բան մը չըլլար: Բայց կ'ապահովեմ սր ապագային Չէյթունցիները ա՛լ ասանկ վայրագութիւն պիտի չընեն, ու միսիոնարներուն մէկ մագին պիտի չզգային... եթէ նորէն հոն չերթան:

Այս ոգելից պատասխանը Դուրը կը հաղորդէ ամերիկեան զեսպանին որ կ'ըմբռնէ թէ Հայոց պատրիարքարանին ու Դրան միջեւ համաձայնութիւն մը կայ մէկտեղ արգիւելու համար օտար ներմուծումներ, մէկը՝ իր կրօնքին, միւսը՝ իր քաղաքականութեան ապահովութեանը համար, ու ալ կը լռէ:

Օ՛հ, եթէ հիւս պետութիւն մը կէս բերնով առաջարկ մը ընէր Դրան Չէյթունցիները պատժելու...

Աս այժմ՝ զո՞հ միանք մելորութիւնով:

ՀՐԱԶԴԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱԿԱԲՈՅԾՆԵՐԸ

Ա

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՈՐԾԻՉԸ

Ութ տարիէ ի վեր ազդին անդին տեսած ու լսածնե. բոլս կրցած էի քիչ շատ գաղափար կազմել մեր մէջ յեղափոխական շարժումէն ծնած կարգ մը յարանուններու նշանակութեան մասին: Այսպէս՝ զիտէի թէ ի՞նչ է տէոռո մը, գործիչ մը, հերոս մը, ընկեր մը, խմբապետ մը, հայրուկ մը, աւազակապետ մը, լիազօր ներկայացուցիչ մը, եւայլն եւայլն: Ի՞նչ որ չէի կրնար ըմբռնել կամ չէի ըմբռնած տակաւին, ան ալ «Արտասահմանի գործիչ»ն էր, եւ ասիկա բնական է, որովհետեւ, ինչպէս անունէն ալ կ'երեւնայ, այդ տիպարը անկարելի էր Տաճկաստանի մէջ գտնալ: Երբ պարագաները զիս դուրս նետեցին վտարի ափերէն, եթէ ոչ առաջին՝ գոնէ յետին մտածումներէս մին եղաւ. — «Լա՛ւ, հիմա պիտի կրնամ վերջապէս տեսնել արտասահմանի գործիչ մը:»

Աթէնք գտնուած միջոցիս հոնտեղի ծանօթներուս հարցուցի.

— Ձեր մէջը բնաւ արտասահմանի գործիչ չի կա՞յ:

— Չէ՛. հատ մը կար, զնաց:

— Ի՞նչպէս մարդ է արտասահմանի գործիչը, ի՞նչ կ'ընէ, հարցուցի միամտօրէն:

— Մեզի պէս մարդ է, քիթ ունի, ախոնջ ունի, բերան ունի, կ'ուտէ, կը խմէ, կը պառկի, պատասխանեցին խնդալով:

Այս բացատրութիւնը գոհացուցիչ չէր, ու միշտ անորոշութեան մէջ մնացած էի արտասահմանի գործիչին մասին:

Ամիսներ ետքը, երբ Եզիպտոս կ'երթայի, շոգենաւին մէջ աղօթքի մը պէս կ'ըսէի մտքէս. «Ա՛խ, իցիւ թէ Ստանան զիս արտասահմանի գործիչի մը զէմ հաներ:»

Աստուծմէ յոյսս կտրած ըլլալով, ժամանակէ մը ի վեր, երբ խնդրեք մը ունենաւ, ուղղակի սատանային կը զիմու: Արդ, զուրջ ալ անանկ ըրէք, որովհետեւ երբ Ալեքսանդրիա ելայ ու հարցուցի թէ արտասահմանի գործիչ մը կ'արքաղքին մէջ,

— Հոպո՛ւ, պատասխանեցին միաձայն:

— Ո՞վ է:

— Կակաեանցը:

— Կովկասցի՞ է:

— Այո՛:

Պարագաներ կան ուր մարդ որչափ ալ պաղարիտութիւնը պահել ուզէ չի կրնար իր խանդը զսպել: Գիտարկուողը նետեցի ու գոչեցի.

— Կեցցէ՛ համերաշխ գործունէութիւն:

Կը հասկնաք անշուշտ որ ուրախութիւնս չափ չունէր. գտած էի արտասահմանի գործիչ մը եւ անիկա կովկասցի էր... այսինքն փնտուած տիպարիս կատարելագործեալը:

Գալով արձակած բացագանչութեանս՝ կարծեմ անհրաժեշտ է բացատրութիւն մը տալ, քանզի ընթացողը կրնայ տարօրինակ կամ անհարկի նկատել «Կեցցէ համերաշխ գործունէութիւն»ը:

Նախ ըսեմ որ Հայերու ժամադրաւայր եղող սրճաբանի մը մէջ կը գտնուէի եւ յետոյ նոյն օրը հասած էի Ալեքսանդրիա, այնպէս որ չէի ճանչնար տակաւին սեղաններուն շուրջը հաւաքուած ու նարտ խաղալու գրադած պատուարժան անձերուն տրամադրութիւնները ու կարծիքները: Վախցայ որ մեծամասնութիւնը թշնամանաճ կ'ըլլամ գուցէ եթէ «Կեցցէ' Հնչակ» կամ «Կեցցէ' Դրօշակ» կամ «Կեցցէ' Միութիւն» կամ «Կեցցէ' յեղափոխութիւն» պոռամ. մինչդեռ համերաշխ գործունէութիւնը այն գեղեցիկ, առաձգական ու անխմաստ բանաձեւներէն մէկն է, զոր կարելի է գործածել առանց վիրաւորանքներ կասկածելու:

«Կեցցէ' համերաշխ գործունէութիւն»:

Ահա՛ բացագանչութիւն մը զոր կրնաք արձակել առէն վայրկեան ու ամէն տեղ, յեղափոխականներու կամ պահպանողականներու, վաճառականներու կամ աւագանիներու խմբի մը մէջ հաւասարապէս:

Արդէն «Կեցցէ'»ի արդիւնքը անմիջական եղաւ եւ անգամ մըն ալ հաստատեց զի այն համոզումիս մէջ թէ անխմաստ խօսք մը միշտ լաւագոյն ազդեցութիւնը կ'ընէ ամբողջին վրայ: Քանի մը սեղաններէ հրաւերներ ուղղուեցան ինձի: Ընդունեցի ժօտաւորագոյն սեղանին հրաւերը որուն քով նստած էին երկու տարիքոտ անձեր:

— Համերաշխ գործունէութիւն, ըսաւ մին աթոռ մը ցոյց տալով ինձի, այո՛, ճիշդ ասիկա է որ կը պակսի մեզի. մատերնիդ բուն վերքին վրայ դրիք: Նոր եկաք Ալեքսանդրիա:

— Այս առտու:

Խօսակցութեան սկսանք, մինչ հետզհետէ միւս սեղաններէն մարդիկ անջատուելով կուգային կը միանային մերինին, նոր հասած օտարականի մը հրապուրանքէն բռնուած:

— Կակաեանցը ո՞ր է, հոս չի՞ գար, հարցուցի միջոց մը:

— Կուգայ, բայց իրիկունը ուշ ատեն, ցերեկները կը քնանայ:

— Ի՞նչ գործ կ'ընէ հոս:

— Բան մը չընեմ. յեղափոխական է:

— Չգեցէ՛ք սա պարապ մարդը, գոչեց ներկաներէն մին՝ որուն անմիջապէս ուրիշ ձայն մը պատասխանեց.

— Կը ներես, պարոն Կակաեանցը պարապ մարդ չէ:

— Շատախօսին մէկն է:

— Շատ կը խօսի, այո՛, բայց տրամաբանութեամբ կը խօսի:

Ու ահա՛ միճաբանութիւնը տաքնալ սկսաւ: Իբրեւ նորեկ եւ ինչորի առարկայ եղող անձին բոլորովին անծանօթ, բնականաբար իմ դերս բացարձակ չէղբուութենէ տարբեր բան չէր կրնար ըլլալ: Լոցի եւ թող աուի որ կիրքերը խօսին:

— Մարդը շէնք շնորհք համալսարանական է. հինգ տարի Ժընէվ մնացեր է:

— Ան ըսաւ դուն ալ հաւտացի՞ր:

— Եղբայր, ալպո՞մ մը ունի քովը, մէջը բոլոր Ժընէվի պատկերները կան:

— Աղէկ գործ մը գտանք իրեն, ֆրանսերէն քննութիւն մը չկրցաւ տալ որ ընդունուէր. ատ է համալսարանական:

— Դուք ի՞նչ հաստգրուի մարդիկ էք, լեզուագիտութիւնը ուրիշ բան է, անոր սորվածը ուրիշ բան:

— Ի՞նչ է սորվածը, անուն չունի՞:

— Ըսաւ անունը բայց մտքէս ելաւ. հիմա գայ նէ կը հարցնենք: Լո կ'ի ո՞վ կը վերջանայ բայց սկիզբը չեմ գիտեր:

— Ի՞նչպէս կ'ապրի խելք չի հասնիր, ըսաւ ուրիշ մը, գործ մը չունի ու մենէ աղէկ կ'ուտէ կը խմէ:

— Քենէ գրամ ուզեց:

— Չէ, բայց...

— Ուրեմն լո՛ւ:

Ու այսպէս վէճը տեւեց երկու ժամ մինչեւ որ մէջերունէս մին գոչեց յանկարծ.

— Կուգայ կոր, կա՛րճ կապեցէք:

Կակաեանցն էր...



Եթէ ըսեմ որ Կովկասի յեղափոխական մըն էր ներս մտնողը կարծեմ պէտք չի մնար նկարագրելու իր գէմքը: Անմիջապէս կ'երեւակայէք ջրվէժացեալ մօրուքով, զիսախտիկ մազերով, լոյսնզր գլխարկով թուխ երիտասարդ մը սեւազգեստ ու ձեռքը հաստ գաւազան մը բռնած: Երկու տեսակ Կովկասցի չի կայ. ամենքն ալ Կակաեանց են: Այդ մարդոց մազն ու մօրուքը երբեք չեն զգացած մկրատի շփումը, եւ եթէ ամէն մարդ Կովկասցի ծնէր աշխարհի երեսը, սփորնչները պիտի ստիպուէին յեղափոխական ըլլալ ապրելու համար:

Երբ սրճարան եկաւ ճառագայթում մը կար դէմքին վրայ:

— Մի լաւ աւետիս, գոչեց խօսքը ամենուս ուղղելով, պատերազմ պէտք է ծագի Յոյներին ու Թուրքերին մէջ: Այժմ ժամանակը հասել է գործելու. պէտք չէ կորցրել մի րոպէ:

Լոցը: Երկու ձեռքով բռնեց հաստ գաւազանը, վրան ծոցեցաւ քիչ մը, իյնալու ձեւով, գէպի փողոց դարձուց զլուխը եւ երազուն նայուածքով մը շարունակեց իր խօսքը, աւելի ցած ձայնով, իբր թէ ինքն իրեն խօսէր.

— Բայց, ափսոս, մարդ չունենք... կոխի մարդ...

Չիղ ունեցող, արին թափող մարդ: Կազմակերպեալ խումբեր թէեւ կան... բայց ո՛չ բաւականաչափ:

Ապա գէպի մեզ դարձաւ:

— Ինչ որ է, ես անմիջապէս երբ պատերազմի լուրը բերող հեռագիրը կարդացի զրեցի մեր ընկերներին, յուսամ նկատողութեան կ'առնուի իմ գրածներ: Պէտք է շարժիլ... պէտք է շարժիլ...

—Պարոն Կակաեանց, եկո՛ր քեզի հետ երթանք կոռելու, ըսաւ երիտասարդ մը ոտք ելլելով, իրր թէ նոյն վայրկենին իսկ մեկնելու պատրաստուէր:

—Հերն եմ անիծել այն բուժութիւնդ այն որ զիս գամել է այս տեղ, առանց զորա ես այս բուժիս պէտք էր լինէի Մասիսի գաղաթում, պատասխանեց Կակաեանց եւ ամոռ մը աննելով եկաւ նստաւ քովերնիս:

Քիչ մը ատեն ալ շարունակեց Կակաեանց իր տեսութիւնները պարզել թուրքեւ յունական պատերազմին հետեւանքներուն վրայ ու յետոյ խորհրդաւոր կերպով մը հաղորդեց մեզի, —ինչորեքով որ խօսքը մէջերնիս մնայ,— թէ կոմիտէ թը արդէն պատրաստութիւններ ունի ժամանակը եկած ատեն «մի ընդհանուր շարում առաջ բերելու թրքահայաստանի գաւառներում»:

Այս սրտապնդիչ տեղեկութիւնը մեզի տալէ ետքը Կակաեանց աւելցուց.

- Է՛, ինձ մի բան չէ՞ք հրամայեն:
- Գարեջուր մը բերել տուին իրեն:

Յետոյ անխուսափելի վիճարանութիւնը բացուեցաւ օրուան խնդրին վրայ. միութիւն թէ անջատ գործունէութիւն, կեդրոնացում թէ ապակեդրոնացում եւն: Կակաեանց կը խօսէր լիաբերան՝ անընդհատ ծխելով: Որովհետեւ տակաւին չէի գիտեր ո՛ր կուսակցութեան պատկանիլը, հետեւաբար չկրցայ հասկնալ թէ կեդրոնացումը կամ ապակեդրոնացումը կը պաշտպանէր:

Երբ ընթրիքի ժամը մօտեցաւ ու ամէն մարդ կը պատրաստուէր մեկնելու Կակաեանց կեցուց մեզ ըսելով՝

- Պահ մի կացէ՛ք, մի բան պիտի ասեմ ձեզ:

Եւ սկսաւ պատմել թէ երիտասարդ մը որ հաճի Մարկոսի կամ Կիրակոսի խմբին մէջ կը գործէ եղեր, բռնուեր, երկու տարի բանտ մնացեր, յետոյ փախեր ու Կիպրոս ապաստաներ է, որ հիւանդ ու չքաւոր վիճակի մէջ կը կը գտնուի եղեր: Կակաեանցի բարեկամներէն մին՝ «մի անձնուէր ընկեր», որ Կիպրոս է եղեր «գաղտնի պաշտօն»ով, հաղորդեր է իրեն այդ «նախկին հերոս»ի տըխուր վիճակը, մի անմիջական օգնութիւն խնդրելով:

—Պէտք է նրան մի պան վճարէք որ զրկեմ վաղուայ պոստով, գա անհրաժեշտ է, աւելցուց Կակաեանց իրբու վերջաբան իր պատմութեան: Այդ երիտասարդ մի այն պիտի հերոս է որի նման եթէ մի քիչ աւելի գտընվէր մեր ազգում, փրկութեան գործը տարբեր հանգամանք էր առնում:

Վեց հոգի հինգական զրուշ տուին: Կակաեանց տըժգոհ կերպարանքով մը զրամը գրպանեց ու ելաւ գնաց:

\* \* \*

Ամիս մը ետքը երբ Գահիրէ կը գտնուէի, Հայկական սրճարանին զիմացէն անցած միջոցիս նշմարեցի Կակաեանցը որ հսն նստած կը խօսէր, գլուխը խուլք մը մարդ հաւարած:

Որովհետեւ լաւագոյն բան մը չունէի ընելիք՝ ներս մտայ:

Հարկ չի կայ կարծեմ ըսելու որ Կակաեանց կը խօսէր միութիւն թէ անջատ գործունէութիւն, կեդրոնացում թէ ապակեդրոնացում եւ այլն խնդիրներու վրայ:

Ես ալ մասնակցեցայ վիճարանութեան, պաշտպանեցի միութեան գաղափարը, յետոյ ցոյց տուի որ անջատ գործունէութիւնը լաւագոյն էր, կեդրոնացումին ի նպաստ խօսեցայ եւ վերջացուցի խօսքս ապակեդրոնացումի առաւելութիւնները պարզելով: Գնչերը վրայ հասաւ եւ միաբերան վճոցեցինք թէ հարկ չի կար վիճարանութիւնը շարունակելու քանի որ ամենքս ալ համակարծիք էինք եւ փորձերնիս անօթեցած էր:

Մեկնելու մօտ պարոն Կակաեանց ըսաւ.

- Կացէ՛ք մի քիչ. մի կարելոր պան ունեմ ձեզ տեսելու:

Եւ պատմեց թէ «մի նախկին տէոռ», որ այժմ՝ Վառնա կը գտնուի եղեր, շատ խեղճ վիճակի մէջ, գիմում ըրեր է իրեն որպէս զի քանի մը սոկի ճարէ ու զրկէ: Կակաեանց իր ժամացոյցը —մի լաւ ժամացոյց ժընէվի լաւագոյն գործարաններից մէկից — վիճակահանութեան զրեր է այս նպատակով:

—Պարոններ, պէտք է մի պան վճարել. գա մի հերոս է որի նման եթէ մի քիչ աւելի գտընվէր մեր ազգում, փրկութեան գործը տարբեր հանգամանք էր առնում:

Եւ գրպանին հանեց թուղթ մը ուր արդէն նշանակուած էին նստրատուններու անուններ, Ռումը՝ չորս զրուշ, Կայծակ՝ երեք զրուշ, Պատուհաս՝ մէկ զրուշ, Սուլթանի թշնամին՝ վեց զրուշ, Վառոգ՝ հինգ զրուշ, եւ այլն: Մենք ալ ստիպուեցանք մէյմէկ պլտիկ գումար վճարել կեղծանուններով: Ես չորս զրուշ տուի եւ ստորագրեցի «Նիգրօ-Կլիտերին»:

—Մէկտեղ ճաշենք այս իրիկուն, ըսի Կակաեանցին երբ զուրս կ'իլլէինք սրճարանէն:

- Շատ լաւ:

Եւ ուղղուեցանք Պապ-Էլ-Պահրի ճաշարաններէն մէկը: Քանի մը դաւաթ զինի պարպելէ ետքը յանկարճ ըսի իրեն.

- Պարոն Կակաեանց, ինչո՞ւ եկած ես Եջիպոս:
- Ե՛ս, զարմանք, պրոպականտի համար:
- Բայց հոս ի՞նչ օշուառ ունի քու պրոպականտով, արտասահմանի Հայերուն մէջ յեղափոխական թերթերը կրնան ազատօրէն պրոպականտ ընել, պէտք է թուրքիա երթալ, հսն աւելի օգտակար, աւելի կարելոր է:

—Թուրքիա՞, ես չեմ կարող այդ բարձարս թուրքերի երեսը տեսնել, թէ մի հատ հանդիպեմ նրանց՝ հենց այն բուժիս պէտք է սպանանեմ...

- Լա՛ւ, սպանանի՛ր:
- Ինչ հեշտ ես ասում, որ այդ կարելի՞ է:
- Եթէ կարելի չէ մի՛ սպանանի՛ր, բայց գնա՛ թուրքիա:

—Գուր թրքահայերդ լո՛ կ'ի տ ու յ չէք խօսում, ամէն բան թեթեւութեամբ էք դատում, պատասխանեց Կակաեանց: Քո ասածի մէջ իմաստ չի կայ, այդ սօփիզմ է:

- Ուրեմն երթա՛նք քիչ մը մուռ դալ:

\* \* \*

Անցաւ քանի մը շաբաթ: Առտու մը փողոցին մէջ հանդիպեցայ կահաւանցին որ զիս տեսնելուն պէս քսու վազեց:

— Պէտք է այս գիշեր ժամը Ծին գտնուիս Ապոլասի, պարոն Վարդանի տանը: Մի բանախօսութիւն պիտի տեսնեմ, ըսաւ, մի քանի կարեւոր հարցերի մասին:

Գիշերը զացի նշանակուած տունը ուր բաւական մեծ կակ սենեակի մը մէջ հաւաքուած էին արդէն տեղացի ու փախտական երեսունի չափ Հայեր:

Կահաւանց երկու ժամ խօսեցաւ միութիւն թէ անշատ գործունէութիւն, կեդրոնացում թէ ապակեղրոնացումի վրայ: Իր խօսքը լմնցնելէ ետքը բանաձեւ մը ներկայացուց, իբրեւ հզօրակացութիւն իր ըսածներուն, եւ ուզեց որ քուէտրիուի, զրկուելու համար զանազան կուտակութիւններու կեդրոններուն: Անկարելի եղաւ: Հոն զրտնուոյ երեսուն հոգին ալ երեսուն տեսակ յատուկ կարծիքներ ունէին միութեան, անշատ գործունէութեան, կեդրոնացումի եւ ապակեղրոնացումի մասին: Նորանոր բանաձեւներ առաջարկուեցան սրոնց ամենքն ալ մերժուեցան: Վերջապէս հազիւ կարելի եղաւ վեց ձայն հաւաքել հետեւեալ բանաձեւին շուրջը.

«Եղիպտոսեան Հայերը կը խնդրեն մեր յեղափոխական կուտակութիւններու կեդրոններէն որ, ի սեր ազգային փրկութեան պատին, հեռի վանին ամէն անձնական նկատառումներէն, և անցեալին տխուր փորձերէն իրատուած՝ այսուհետեւ անշատ միութեամբ եւ ապակեղրոնացեալ կեդրոնացման գրովիմամբ առաջ վարեն Սուրբ Գործը: Հակառակ պարագային, Եղիպտոսեան Հայերը որոշած են, ի սեր միութեան, բաժնուիլ եւ նոր կուտակութիւն մը հիմնել վերոյիշեալ սկզբունքներուն վրայ հաստատուած:»

Սենեակին մէջ մտերը սպասելու մօտ էին ու տանտերը՝ Վարդան՝ կը մրափէր.

— Երթա՛նք...

— Խնդրեմ, պարոններ, կացէք մի րոպէ, մի կարեւոր պատն ունեմ՝ ասելիք, ըսաւ կահաւանց:

— Հասկցանք, մրժոացին մէկ քանիներ ու սենեակէն դուրս սարգեցան, իրենց հետ բաշխելով սրիչներ ալ:

— Խնդրեմ, կացէ՛ք մի րոպէ...

— Հոս ենք, կուզանք կոր:

Ո՞վ խենթեցեր է որ ֆնայ:

Հինգ հոգի հազիւ մնաց, որոնց մէկն ալ կը մրափէր, ըսելու համար տխուր պատմութիւնը «մի նախկին Հայ-զուկ»ի որուն գնդակը տարիներով «սարսափ էր սիռել Քրդերին մէջ» եւ որ հիմա զրեթէ անօթի կը թափառի եղեր Ռուսնուք:

— Պէտք է մի պան վճարել նրան. եթէ մի քիչ աւելի գտնուիլ նրա պէս հերոսներ, փրկութեան գործը տարբեր հանգամանք էր առնում:

Չարմանալին այն էր որ գտնուեցան պեռ մեր մէջ երեք հոգի որոնք հինգական զրուշ տունին, միայն թէ աւելցնելով.

— Ա՛յ աս վերջինն է:

Եւ իրա՛ւ ալ վերջինը եղաւ:

Կահաւանց քանի մը օր ետքը անյայտ եղած էր Եղիպտոսէն:

\* \* \*

Բաւական ժամանակ ետքը շրջաբերական մը ցոյց տուին ինծի «պաշտօնական կնիք»ով: Այդ շրջաբերականը կը յայանէր որ իմացուած էր թէ կահաւանց անուանով մարդ մը, Եղիպտոսի մէջ, զրամ հաւաքած է յեղափոխական նպատակի համար՝ զանազան խաբեբայական միջոցներով, եւ զրամը չէ զրկած կեդրոնական սնտուկին, հետեւաբար այդ անձը արտաքրուած է կուտակութիւնէն:

Հիմա հասկցած եմ թէ ի՞նչ է «Արտատահմանի գործիչ» մը:

ՎԱՀՐԱՄ

ԲՐՈՑ. ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲրոՑ. Անդրէաս Արծրունիի մահը շատ կսկծելի ու աւաղելի կորուստ մըն է հոյ ազգին համար: Այն սակաւթիւ հայերէն էր ինքը — Լօրիս—Մէլիքոֆ ու Նուպար փաշա իբր պետութեանց վարիչ, Այվազուսքի իբր պեղարուեստի մարզ, Լազարէֆ, Տեր—Ղուկասոֆ, Շուկուիկի կով իբր պատերազմիկ — որոնք այնքան փալլուն կերպով կը մարմնաւորեն Հայութիւնը Եւրոպայի ու մարդկութեան առջեւ, ու իրենց գոյութեամբ իսկ, ծառայութեանց մեծագոյնը կը մատուցանեն ցեղին որուն կը պատկանին, անոր զերազոյն ընդունակութեանց ապացոյցը տալով:

Արծրունիներու զօրեղ տուճիւն վերջին շատաւիշն էր ինքը: Իր մեծ—հայրը, Վանցի Արծրունի Գրիգոր ուղան, որ 1813ին Թիֆլիս կը հաստատուէր, «Մշակ»ի հրատարակած կենսագրութեան մէջէն մեզի կ'երեւնայ իբր ճշմարիտ տիպարը այն ամուր ու առկուն Հայերուն որոնք մեր ցեղին ամէն բարեմասնութիւնները ու թերութիւնները կը ներկայացնեն իրենց մէջ, այն կամքով ու խելքով լեցուն ամիրաներու սերունդէն որոնք մէկ կողմէ Թիւրքիոյ մէջ գաւառէն կուղային Պոլսոյ կը տիրէին ու միւս կողմէ կովկասի մէջ իրենց խաղաղ երկրակալութեան նշանաբարերը կը հաստատէին: Իր բարձր ընդունակութիւնները իր միակ զակին՝ զօրավար Երեմիա Արճրունիի մէջ՝ ցելի զինուորական ու վարչական գործունէութիւնը գարձան, ու իր երկու թոռներուն՝ Գրիգոր ու Անդրէաս Արծրունիներուն մէջ՝ մեր ցեղին յայտարար զիւրաթիքութեամբ՝ զէպի բարձրագոյն մտաւորականութիւն մը: Մինչ Գրիգոր Արծրունի, իբր հրապարակազիր ու հանրային գործիչ, իր անշնչելի զրոշմը կը գնէր կովկասի Հայութեան հանրային մտքին կազապարմանը վրայ, անդին, Եւրոպայի մէջ, Անդրէաս Արծրունի, միջազգային դիտութեան մթերքը կ'աւելցնէր իր հետազօտութիւններով:

Անդրէաս Արծրունիի կեանքը, թէեւ կարճատեւ (31 տարեկան մեռաւ) բեղմնաւոր դիտակաւանի մը կեանքը եղաւ: 1870ին էր որ Հայտըլպերիի համալսարանին քիմիայի տղջորութեան աստիճան կը ստանար, 1873էն 77 օգնական բրոսֆէտոր էր Ստրազպուրի, 1877էն 83 ուսուցիչ Պերլինի համալսարանը, 1883էն 84՝ Պրեսլաւի համալսարանը, և 1884էն 98՝ Ալեքիլար հետազոտական

բարձրագոյն վարժարանը: Իր գիտական գրուածքներուն թիւը 50ը կ'անցնի, որոնց նշանաւորներն են բիւրեղներու ֆիզիքական բիւրեղի վերաբերեալ աշխատութիւնը, նեֆրիզներու, զատէիքներու մասին գրուածքները, հետազօտութիւններ գործարանական քարացած մարմիններու մասին եւայլն: Արժուանի շնորհիւ զանաւոր են նոր հանածոներու ամբողջ շարք մը, որոնք են ցերէմէլիդ, մանկանօդանդիդ, ուզահիդ, քրոմադիւրմային եւայլն: Իր հաւաքածոյները, զորոնք ժողոված է Ուրալ, Կովկաս եւ անգլիական Կիւյանա (Հարաւային Ամերիկա) ճամբորդած ասան, այժմ կը գտնուին Ախէնի արհեստագիտական վարժարանին մէջ:

Թղթակից—անգամ ընտրուած էր Թուրինի արքայական ակադեմիային, Պրէմէնի աշխարհագրական ընկերութեան, պատուոյ անդամ Ուրալեան Բնագէտներու ընկերութեան, Բեդրպուրիի կայսերական Ակադեմիային, պատուոյ անգամ Բեդրպուրիի Հանքարանական ընկերութեան եւ սրիշ շատ ընկերութիւններու:

Մոսկուայի «Ռուսքի Վիետամօզի»-ն Անդրէաս Արժուանիի գիտական գործունէութեան մասին ընդարձակ ուսումնասիրութիւն մը հրատարակեց, ուր կ'երեւայ ամբողջ գիտնականը, խօտապահանջ, ուղղամիտ, ճշգրիտ եւ անխոնջ աշխատող: Բիւրեղներու բիւրեղային նկատմամբ անոր կատարած աշխատութիւնը, կ'ըսէ, երկար ատեն սիւտի ձայ իբր ստուգարան այդ ասպարէզին մէջ ամէն աշխատողի համար: Կ'արեւ ուսութեան յիշել նաեւ սա առգերը. «Կարելի չէ շիշել անոր մատուցած ծառայութիւնները ուս հետազօտողներուն. ուս լեզուով տպուած շատ աշխատութիւններ գիտական գրականութեան մէջ ծանօթ եղած են միմիայն անոր ջանքերուն և ցուցումներուն շնորհիւ:»

Թեւեալ, իր հայրենիքին մէջ իր գիտական ձգտումներուն պատշաճ ասպարէզ գտնել անհնարին ըլլալով, աւելի բարձրագոյն դաշտ մը ընտրած էր իր գործունէութեանը, և սակայն Անդրէաս Արժուանի բնաւ չզգարեցաւ իր ցեղին զարգացմանը աշխատելէ, անոր ճակատագրովը հետաքրքրուելէ, և իբր պարտաճանաչ անգամ մը, հայ ընկերութեան բերելէ իր ձեռքերուն բաժինը: Տարիներով կանոնաւորապէս աշխատակցեցաւ «Մշակ»ի, զրելով ամէն ինչով լրայ, Գերմանիայէն, Չուիցերիայէն, Իտալիայէն, Ամերիկայէն, քաղաքական ու ընկերական հարցերը ժողովրդականացնելով հայ ընթերցողներուն համար, զանանց լուսաւորելու անխոնջ կամեցով մը: Պերլինի Վեհաժողովին ատեն, երբոր բոլոր Հայոց աչքերը Գերմանիոյ մայրաքաղաքը ուղղուած էին անձկութեամբ, «Մշակ»ի մէջ կը գրէր Վեհաժողովին աշխատութեանց մասին: Ամէն անգամ որ Կովկաս կ'երթար, առիթ չէր փախցնէր իմբարականներով ու յօգուածներով Կովկասի Հայերը յարգութիւնը սր սրովին գիտնականօրէն շահագործել իրենց երկրին անբաւ հարստութիւնները: Վերջերը, երբ ա'լ հիւանդութիւնը արդէն ձեռքը գրած էր իր վրայ, դադարեցուցած էր իր աշխատակցութիւնը «Մշակ»ին. բայց Չոլայի վսեմ գործին առթիւ նորէն գրիչը ձեռք կ'անէր, հայ ե-

րիտասարդութեան քարոզելու համար գերագոյն խաւաներու պաշտամունքը:

Մենք, «Նոր Կեանք»ի մէջ, երբեք չի պիտի մոռնանք իր հեղինակաւոր ու քաջաշէրտ ձայնը որ եկաւ մեր համեստ ճիշդը զնահատելու եւ մեզ սրտասպնդելու մեր գործին մէջ: Սրտի ահռելի սեղմումով մը կը բանանք հիմա այդ նամակները, որոնց մէջ մահուան անհուն թախծութիւնը կար արդէն: Յուլիս 7ին արդէն, ընդարձակ նամակի մը մէջ ուր «Նոր Կեանք»ի մասին իր բարձր համակրանքը կը յայտնէր այնպիսի խօսքերով զորոնք զիւրահասակնալի պատճառով մը չենք ուզեր հրատարակել, և ազգային ընդհանուր խնդիրներու վրայ կը խօսէր, Հիւսիսային (Չուիցերիա) բուժական ջրերէն կը գրէր մեզի.

«Հիւսիսային շատ ծանր է եւ ես չեմ կարծում որ ինչ վիճակով լինի երկար ապրիլ:»

Օգոստոս 5ին, Պերլինի Սալէմ հիւանդանոցէն. «Իմ առողջութեանս գրութիւնը վատանում է. բէշկները լստ երեւոյթի հրաժարում են ինձանից և ուղարկում են յետ դէպի Գերմանիա: Եւ լսեցի ինչպէս մէկը ասաց՝ «Մի քանի ամիս»:»

Իր վերջին նամակը, Հոկտեմբերի (Գերմանիա) հիւանդանոցէն, օգոստոս 24ին թուականը կը կրէ, մահուանէն (22 սեպտեմբեր) իբր ամիս մը առաջ: «Բենից այստեղ — կը գրէր — որ 12 ժամից ճանապարհ է, ես կարողացայ միայն երկու օրում կատարել եւ այն էլ օգնութեամբ մի բարեկամիս եւ մի ծառայի: Ինձ այժմ հարկաւոր է հանգստութիւն եւ հանգստութիւն:»

Այդ նամակին վերջը, ակնարկելով այն յոյսերուն որոնք, հակառակ ներկայ ժամանան ամէն արիւթիւններուն, ամէն Հայու սրտին խորը կը ծաղկին՝ լուսագոյն օրերու աննշանքով, իր հոգեվարի սրտառուջ հրաժեշտը կուտար. «Յուալի է որ ես այլ եւս ներկայ չեմ լինի ձեզ հետ միասին ուրախանալ:»

Մեր ցեղին բարձրագոյն ու արնուագոյն դէմքերէն մին է որ կ'անհետանայ իրմով:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ Հայկական Ն. Կաստամատոյց Յանձնաժողովին (որուն գործադիր ժողովին նախագահն է Ուէսլմինսդրի դուքսը) ձեռքով Հաճընի մէջ մանարան մը հաստատուած ըլլալով, հոն աշխատող հայ կիները որոշած էին անգլիական նպաստով հայթայթուած «Թէզկեհա»-ներուն առջին արդիւնքը բնծայել Անգլիոյ թագուհիին: Այս երախայրիքը, գորգը, Ուէսլմինսդրի դուքսին ձեռքով թագուհիին մատուցուած ըլլալով, Ն. Վեհափառութեան անձնական քարաւար Սըր Արթըր Պիլ հետեւեալ նամակը ուղղած է Ուէսլմինսդրի դուքսին.

Պալմորըլ, 22 հոկտ. 98

Սերելի դուքս Ուէսլմինսդրի, Թագուհիին շատ գոհ մնաց Հաճընի հայ կիներուն

բանած զորդէն, որ ձեր միջոցաւ նորին վեհափառութեան մատուցուեցաւ: Կը հաճիք նորին վեհափառութեան ջերմ շնորհակալիքը հաղորդել ուր որ անկ է, միանգամայն արձանագրել գոհունակութեան զգացումը սրով Թաղուհին իմացաւ Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողովին բարեկաշտ ջանքերը՝ օգտաւետ եւ շահաբեր աշխատանք հաստատելու Հաճոյնի եւ ուրիշ վայրերու խեղճ ստապուեալներուն համար:

Ձերդ յոյժ անկեղծօրէն ԱՐԹՆԸՐ ՊԻԿ

— Ունկալմանդ զուրքսն Յանձնաժողովը կը շարունակէ նպաստ հաւաքել ի նպաստ Հայոց ու զրկել Հայաստան ու Կիլիկիա: Յանձնաժողովը իր տեղեկագիրը հրատարակած չէ, բայց կ'իմանանք թէ մինչեւ հիմա իր հաւաքած ու բաշխած գումարը՝ 101,000 անգլ. ոսկիէն աւելի է: Այս գումարին 12,000 ոսկին Պուլկարիոյ հայ գաղթականներուն համար ծախսուած է, եւ մնացեալը Հայաստան ու Կիլիկիա զրկուած:

— Ունկալմանդ զուրքսն մէկ նամակը, որ հրատարակուեցաւ անգլիական թերթերուն մէջ, ճշմարիտ աղետականի մը ու խղճամիտ մարդու մը զգացումները կը յայտնէ, որ, սովամահ դժբաղդներու օգնած ժամանակը՝ անոնց կրօնական ըմբռնումները այս ինչ կամ այն ինչ դաւանանքին շահելու անարդ գործէն կը խորշի: Գոյքը, յիշելով թէ Անգլիոյ մէջ հաստատուած դանազան ընկերութիւններ նոր կոչ մը ուղղած են ինչպէս հայ զրթբաղդներուն, կը յայտարարէ թէ իր Յանձնաժողովը անոնց հետ գործ չունի: «Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողովը բնաւ չի քաջալերեր Հայերը զատուելու իրենց Հայաստանեայց Ազգային Եկեղեցիէն, որ արիաբար դիմադրուած է հալածանքի դարերու փոթորիկներու, եւ սրուն եպիսկոպոսները եւ կղերը արժանի են մեր համակրանքին եւ աջակցութեան՝ իրենց աղքատներուն օգնելու ձեռնարկներուն մէջ: Այլապէս գործելով, ուխտագրութիւն պիտի ըլլայինք մեր պիտաւոր աջակիցներուն, սրոնց մէջ են Նուպար փաշա եւ ուրիշ երեւելի Հայեր, որոնք իրենց հաւանութիւնը յայտնած են փոքր-Ասիոյ մէջ մեր գործակալներուն ընտրած գործելու մէթոսին:»

— Գարտիֆի հայկական ժողովին առթիւ հրատարակուած տետրակէ մը, որուն վրայ յառաջիկայ անգամ աւելի ընդարձակօրէն պիտի խօսինք, կը տեսնենք թէ մինչեւ ցարդ ամբողջ Անգլիոյ մէջ (Անգլիա, Սկոտլանտ, Իրլանտա) Հայոց համար հաւաքուած գումարը 175,000 անգլ. ոսկիի կը հասնի:

Մինչեւ 1897 մարտ, Կ. Պոլսոյ Կեդրոնական նպաստամատոյց յանձնաժողովը որուն նախագահն է Սըր Ճ. Ուիլզոն, հետեւեալ գումարները ստացած է:

Անգլիայէն ու Իրլանտայէն	Ա. Ո. 65,000
Սկոտլանտայէն	15,000
Ամերիկայէն ու Եւրոպայէն	128,000
Հայերէ	16,000
	224,000

— Վիլհելմ կայսրը հոկտեմբեր 31ին այցելեր է Երուսաղէմի Հայոց պատրիարքարանը, եւ երկու օր յետոյ Լաթիններուն եւ Յոյներուն պատրիարքարանները:

— Այն միջոցին ուր Վիլհելմ կայսրը իր բարեկամ սուլթանին ասպնջականութիւնը կը վայելէ, վանէն տհաճելի լուր մը կուգայ: Քիւրտերը Սիւրիան լերան վրայ յարձակեր են ծանօթ գերման երկրախոյզ Բրոֆ. Պլէքի վրայ, վիրաւորեր են զանի ու կողոպտեր են: Բրոֆ. Կայսրը հիմակ կը գործանուի Վանի մէջ: Սուլթանը խիստ հրաման զրկեր է իր Քիւրտերը պատմելու: Գերմանիա, իր քրիստոնազօր Քայզերով մէկտեղ, պիտի հաճի ընդունել թէ ամէն բան լաւ չէ Թիւրքիոյ մէջ:

Բայց Գերմանիոյ կայսրը, որ Թիւրքիան կը նկատէ կողոպտաւի երկիր մը լոկ, այս նոր փաստին պէտք չունը ըմբռնելու համար իր բարեկամ սուլթանին վարած երկրին ճշգրիտ կացութիւնը: Կ. Պոլսոյ, զեսպաններուն հետ ունեցած տեսակցութեանը միջոցին, յայտարարեր է — «Տէյի թէլէկրաֆ» անտարակուսելի կերպով վաւերական աղբիւրէ մը կը հրատարակէ ասիկա. «Առաջին այցելութենէս ի վեր այս ինը տարուան միջոցին, Թիւրքիոյ կործանումը արագօրէն յառաջիմբեր է:» Կովը մեռաւ, կաթը հատաւ, կ'ըսէ առածը: Հայերն էին որ նեցուկները եղած էին այդ քայքայուող շէնքին:

— Կ. Պոլսոյ մէջ «Սուրհանդակ» անուն նոր հայ օրաթերթի մը հրատարակութիւնը, որուն արտօնութիւն սրուած էր, վերջին պահուն արգելուեր է, որովհետեւ թիւրք անման զրաքնութիւնը՝ անշուշտ կարգ մը հաճոյակատար Հայերու օգնութեամբ՝ զարհուրանքով գտեր է որ «Սուրհանդակ»ին անունը կը նշանակէ... Սուրհանէ թագին... դէմ: Անուշ երկիր:

— Հետաքրքիրներուն ուշադրութեանը կը ներկայացնենք վերջերս Լոնտոն հրատարակուած անգլիերէն խոշոր վէպ մը հայկական կեանքէ: Վէպին անունն է «Սուլթանին հրամանը». հեղինակ Պ. Օլիւթէզը կրիփօրի:

— Հայ անունին ժողովրդականութեանը ա՛լ բան մը չի պիտի պակսի: Լիուզի (Անգլիոյ) աշնան ձիարշաւներէն մէկուն մէջ վազող ձիերէն մէկուն անունը «Արմինիւն» է: Ասիկա բան մը չերեւնար ինքնին, բայց դիտողները պիտի ըսեն ձեզի որ եթէ օր մը այդ ձին Տէրպին շահի, հայ անունը աւելի խորապէս պիտի քանդակէ ամէն անդլիացիի ուղեղին մէջ քան հազար հիւպատոսական տեղեկագիր: Այսպէս կ'երթան աշխարհի գործերը:

ՀԱՍՑԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԿ ՆԱՄԱԿ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ զՐԿԵԼ ՍՈ  
L. FRANK,  
309, LADBROKE GROVE,  
(ENGLAND). LONDON, W.